«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
«ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ЗАО «ГАЗПРОМ АРМЕНИЯ»
ФИЛИАЛ «ИНЖЕНЕРНО-
ТЕХНИЧЕСКИЙ ЦЕНТР»

# ՆԱԽԱԳԾԱ- ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Պետական լիցենզիա №ՔՊԼ 001233

*Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ գազատարի վերանորոգում*

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՏՈՐ 1

## ՕԲՅԵԿՏ № 14-005-26

| | |
|---|---|
| ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ՝ | Հ. ԽՍՊԻՐՅԱՆ |
| ՆՀ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ | Գ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝ | Ա. ՄԵՆԴԻԼՅԱՆ |

ԵՐԵՎԱՆ 2026թ.

# ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

| | |
|---|---|
| **Հատոր 1** | Աշխատանքային նախագիծ |
| **Հատոր 2** | Նախահաշիվ |

# Ն Ա Խ Ա Գ Ծ Ի   Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Լիցենզիա №ՔՊԼ 001233

## Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 16.12.2025թ. № Ն/29/8531-2026 գրություն
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 12.02.2026թ. տեխնիկական առաջադրանք
3. Գավառի ԳԳՄ 26.12.2025թ. տեխնիկական պայմաններ
4. «Ինժեներատեխնիկականկան կենտրոն» մասնաճյուղի ստորգետնյա գազատարի կոռոզիոն վիճակի հետազոտման արդյունքների ՕԲՅԵԿՏ ԳԲՑ №08-03/25
5. Հետագիծ-ուրվագիծ համաձայնեցման ծանուցում

## Տ Ե Ք Ս Տ Ա Յ Ի Ն   Մ Ա Ս

1. Բացատրագիր
2. Կիրառում
3. Ինժեներաերկրաբանական եզրակացություն
4. Շինարարության կազմակերպման դրույթներ

## Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն   Գ Ծ Ա Գ Ր Ե Ր

1. Իրավիճակային գծապատկեր
2. Գազատարի հատակագիծ Մ1:1000
3. Երկայնական կտրվածք
4. Շարժական հենասյուն
5. Ներդիր տարրի և հենարանի տեղադրում հենապատին

- Աշխատանքների ծավալներ

## Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Վ Ո Ղ   Գ Ծ Ա Գ Ր Ե Ր

1. Տարբերիչ նշան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001233, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-09-23, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃ., 43

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 23.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGA4-15F8-6235-55CE**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

ЗАМЕСТИТЕЛЬ
ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА

Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091
тел.: (374 10) 294-704, факс: (374 10) 294-728
e-mail: inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՏԵՂԱԿԱԼ

0091, ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43
հեռ.՝ (374 10) 294-704, ֆաքս՝ (374 10) 294-728
Էլ.փոստ՝ inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«19» 02 2026 г.

№ Ե/29/8531-2026

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ**
**«Ինժեներատեխնիկական կենտրոն»**
**մասնաճյուղի տնօրեն**
**պարոն Ա. Խաչատուրյանին**

**պատճենը՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ**
**Գավառի ԳԳՄ տնօրեն**
**պարոն Գ. Գրիգորյանին**

*ՆՆՓ կազմելու մասին*

**Հարգելի պարոն Խաչատուրյան**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ առաջիկա տարիների Կապիտալ նորոգման պլանում ընդգրկելու նպատակով հանձնարարում ենք Ձեզ համաձայն կից ներկայացվող տեխնիկական առաջադրանքների, տեխնիկական պայմանների, ստորգետնյա գազատարի կոռոզիոն վիճակի հետազոտման վերաբերյալ տեխ. հաշվետվության եզրակացության և տեխնիկական տեղեկանք-հիմնավորումների կազմել ներքոհիշյալ օբյեկտների (ԿՆ-26-Հ5-5.2) նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

1. «Գեղարքունիքի մարզի Գավառի ԳԲԿ – Գավառ քաղաքի IV թաղամասը սնող միջին ճնշման գազատարի վերանորոգում»
2. «Գեղարքունիքի մարզի Գավառի ԳԲԿ – Գավառ քաղաքի Սայադյան փողոցի միջին ճնշման գազատարի վերանորոգում»
3. «Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող միջին ճնշման գազատարի վերանորոգում»:

Հիմք՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գլխավոր ճարտարագետ – Գլխավոր տնօրենի առաջին տեղակալի 13.02.2026թ. թիվ Ն/18.1/7443-2026 ծառայողական գրությունը:

Առդիր՝ 21 թերթ:

**Հարգանքով՝**

**Տ. Կարապետյան**

*Կ. Ղարախանյան*
*+374 (10) 29-49-74*

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի տեղակալ
վերանորոգման և կապիտալ
շինարարության գծով
պարոն Տ. Կարապետյանին

## ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Գավառի ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի Գեղարքունիքի մարզի Գավառի ԳԲԿ – Գավառ քաղաքի IV թաղամասը սնող մ/ճ, Գավառի ԳԲԿ – Գավառ քաղաքի Սայադյան փողոցի մ/ճ և Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ ստորգետնյա գազատարների հիմնանորոգման աշխատանքներն Ընկերության առաջիկա տարիների Կապիտալ նորոգման պլանում (ԿՆ-26-Հ5-5.2) ընդգրկելու նպատակով տրամադրվում են նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման տեխնիկական առաջադրանքները:

*Առդիր՝ Տեխնիկական առաջադրանքները, տեխնիկական պայմանները, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղի ստորգետնյա գազատարի կոռոզիոն վիճակի հետազոտման վերաբերյալ օբյեկտ ԳՔՅ № 08-03/25 տեխ. հաշվետվության եզրակացությունը և (Техническая справка-обоснование) TC-O-08-12-25, TC-O-08-13-25, TC-O-08-14-25 տեխնիկական տեղեկանք-հիմնավորումները – 21 թերթ:*

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր ճարտարագետ-
Գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Ա.Գաբրիելյան

Հաստատում եմ՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր ճարտարագետ-
Գլխավոր տնօրենի առաջին տեղակալ

______________Ա. Գաբրիելյան
_«12»_ ___02__ 2026 թ.

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

## ՀՀ տարածքում գործող վթարային գազատարների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման

| | |
|---|---|
| 1.Օբյեկտի անվանումը (հասցեն)՝ | Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ և Սարուխան գյուղերը սնող մ/ճ ստորգետնյա գազատար |
| 2.Կատարվող աշխատանքներ՝ | Մ/ճ D=219մմ L=746գծմ երկարությամբ գազատարի վերատեղադրում՝ նախագծային լուծմամբ: |
| 3.Միացման կետի տեղակայումը և պարամետրերը՝ | Համաձայն տեխնիկական պայմանների: |
| 4.Այլ հանձնարարականներ՝ | 1.Գազատարի վերատեղադրումն ըստ նախագծային լուծման՝ առաջնահերթությունը տալով պոլիէթիլենային խողովակներով իրականացման տարբերակին, հակառակ դեպքում հիմնավորել:<br>2.Վերատեղադրվող հատվածի տրամագծի ընտրությունն ըստ հիդրավլիկական հաշվարկի:<br>3.Նախատեսել վերատեղադրվող գազատարից սնվող մուտքագծերի ներմիացում: |
| 5.Առաջադրանքի հիմքը՝ | «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղի կողմից տրված ս/գ գազատարի կոռոզիոն վիճակի հետազոտման արդյունքների տեխնիկական տեղեկանք-հիմնավորումը (Техническая справка-обоснование ТС-О-08-14-25) Գավառի ԳԳՄ 16.12.2025թ N Ն/18.1/62613-2025 գրությամբ ներկայացված տեխնիկական պայմանները: |

«Գազպրոմ Արմենիա»
ԳԲՑ և ՆԳՀ Շ ու Ս բաժնի պետ՝ ____________________Ա. Պերոկյան
ստորագրություն

Կազմեց՝ ____________________Ս.Սարգսյան
ստորագրություն

Հաստատում եմ՝
Գավառի ԳԳՄ տնօրեն
……………………… Գ. Գրիգորյան
« 26 » ……… 12 ………. 2025 թ.

# Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն     Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

**Հացառատ թաղամասից Գանձակ և Սարուխան համայնքերը սնող մ/ճ ստորգետնյա գազատար:**

1. Գազի ……… խ/մ ժամային ծախսով հնարավոր է միացնել
2. **Հացառատ թաղամասից Գանձակ և Սարուխան համայնքերը սնող մ/ճ ստորգետնյա գազատար d219մմ L=803գծմ**

(Նախագծվող, կառուցվող, գործող գազատարի անվանումը, տրամագիծը, հզորությունը, տեղակայման տարբերակը)

3. Միացվող գազատարում գազի ճնշումը ……2.2 **մթն**…………………………………………..…………….
4. Միացման կետը՝ **Գանձակ համայնքի N 4 ՊԳԿԿ-ն սնող d219մմ գազատարից**

(Նշել միացման տեղի հասցեն, տեղակայումը և պիկետը)

……………………………………………………………………………………………………………………………..………………………………………

5. Լրացուցիչ պահանջներ ………………………………-………………………………………………..……………

(Հիդրավլիկական վերահաշվարկի կատարման անհրաժեշտությունը)

5.1. ……………………………………………………………-………………………………………………..……………………

(Գլխամասային հաշվիչի հանգույցի տեղադրում ԷՊԿ, ԳԿԿ նախատեսում և այլն)

6. Օբյեկտի գազամատակարարման վերականգնման (և կամ գազաֆիկացման) գծապատկերը

*Ծանոթություն.* *Գծապատկերը կարող է կցվել առանձին թերթով*

*ՊԿ0+00*          *ՊԿ8+03*

7. Տեխնիկական պայմանները կազմված են «…26….»……12…2025 թ.

և գործում է մինչև «…26….»……12…2026 թ.

ԳԳՄ տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետ՝ ______________________ Ս. Գարեյան

ՇՏԲ պետ՝ ______________________ Տ.Ջիրոյան

**Գավառի ԳԳՄ սպասարկման տարածքի Գավառի ԳԲԿ-Սայաղյան փողոց, Գավառի ԳԲԿ-IV թաղամասը սնող և Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան համայնքները սնող մ/ճ ստորգետնյա գազատարների կոռոզիոն վիճակի համալիր ախտորոշում**

*հոկտեմբեր* *ՕՖՅԵԿՏ ԳՖՅ № 08-03/25*

Հետազոտվող գազատարի ընդհանուր երկարությունը՝

| | |
|---|---|
| ըստ առաջադրանքի | - 3,450 կմ. |
| փաստացի | - 3,321 կմ. |

*Եզրակացություն*

Գավառի ԳԳՄ սպասարկման տարածքի մ/ճ ստորգետնյա գազատարների կոռոզիոն վիճակի համալիր հետազոտման արդյունքում պարզվել է.

**13.1. Գավառի ԳԲԿ-Սայաղյան փողոց մ/ճ ստորգետնյա գազատար**

- կառուցման տարին - 1997թ.,
- շահագործման ընթացքում վերամեկուսացման աշխատանքներ չեն կատարվել,
- համաձայն ԳԳՄ տվյալների շահագործման ընթացքում հայտնաբերվել է 2 վթար,
- տրամագիծը –273 մմ. խողովակի պատի հաստությունը 6.71-7.89 մմ,
- մեկուսացման տեսակը - բիտում, հաստությունը՝ 0-1 մմ,
- տեղադրման խորությունը – 0.27...0.93 մ,
- գրունտի էլ. տեսակարար դիմադրությունը 93-560 Օմ x մ է, որը համաձայն ԳOUS 9 602-2016 ունի ցածր կոռոզիոն ակտիվություն,
- գազատարի ուղեգծում առկա է ընդհանուր 10 մ երկարությամբ թվով 2 վերգետնյա հատված՝ ՊԿ 3+72…3+74, ՊԿ 7+36…7+37,
- գազատարն ունի թվով 1 մուտքագիծ,
- գազատարն անցնում է արոտավայրերով, խոտհարքներով, մասնավոր տարածքներով, հողածածկ ճանապարհներով,
- գազատարի ուղեգծում առկա են անվտանգ շահագործման գոտու խախտումներ, որոնց տվյալները բերված են աղյուսակում.

| № | ՊԿ | Հեռավորությունը, մ | Երկարություն, մ | Տեղանքը |
|---|---|---|---|---|
| 1 | 0+97…1+02 | 1.0-1.2 | 5.0 | քարե շինություն |
| 2 | 3+08 | 2.7 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 3 | 3+87 | 2.0 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 4 | 4+48 | 4.0 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 5 | 7+95…8+03 | 0.0-1.5 | 8.0 | Ծառեր |
| *Ընդամենը* | | | *18.0* | |

- գազատարի ուղեգծում առկա է փոխարինման ենթակա հատվածներ, որոնց տվյալները բերված են աղյուսակում.

| № | ՊԿ...ՊԿ | Երկարութ-յունը մ | Տրամագիծը մմ | Տեղադրման խորությունը, մ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 0+00...3+72 | 372.0 | 273 | 0.31-0.93 | խոտհարք, արոտ, հող. ճանապարհ |
| 2 | 3+73...7+36 | 363.0 | 273 | 0.27-0.82 | արոտ, հող. ճանապարհ |
| 3 | 7+37...8+23 | 86.0 | 273 | 0.43-0.73 | արոտ, հող. Ճանապարհ, մաս. տարածք |
| *Ընդամենը* | | *821.0* | | | |

- տրամագիծը տրված է փաստացի՝ ըստ զննահորի հետազոտության

Ընդհանուր բալային գնահատականը կազմում է **9 բալ:**

## 13.2. Գավառի ԳԲԿ-IV թաղամասը սնող մ/ճ ստորգետնյա գազատար

- կառուցման տարին - 1972թ.,
- շահագործման ընթացքում վերամեկուսացման աշխատանքներ չեն կատարվել,
- համաձայն ԳԳՄ տվյալների շահագործման ընթացքում հայտնաբերվել է 4 վթար,
- տրամագիծը –219 մմ. խողովակի պատի հաստությունը 4.67-7.5 մմ,
- մեկուսացման տեսակը - բիտում, հաստությունը՝ 0-4 մմ,
- տեղադրման խորությունը – 0.0...1.76 մ,
- գրունտի էլ. տեսակարար դիմադրությունը 115-267 Օմ x մ է, որը համաձայն ԳՕՍՏ 9 602-2016 ունի ցածր կոռոզիոն ակտիվություն,
- գազատարն ունի թվով 1 բաժանորդային ներմիացում,
- գազատարն անցնում է արոտավայրերով, վարելահողերով, մասնավոր տարածքներով, ասֆալտապատ և հողածածկ ճանապարհներով,
- գազատարի ուղեգծում առկա են հողածածկույթից բաց հատվածներ, որոնց տվյալները բերված են աղյուսակում.

| № | ՊԿ | Երկարություն, մ | Տեղանքը |
|---|---|---|---|
| 1 | 0+52…0+63 | 11.0 | արոտ |
| 2 | 3+85…4+25 | 40.0 | արոտ |
| 3 | 4+60…4+65 | 5.0 | արոտ |
| 4 | 6+34…7+95 | 161.0 | արոտ |
| *Ընդամենը* | | *217.0* | |

- գազատարի ուղեգծում առկա են անվտանգ շահագործման գոտու խախտումներ, որոնց տվյալները բերված են աղյուսակում.

| № | ՊԿ | Հեռավորությունը, մ | Երկարություն, մ | Տեղանքը |
|---|---|---|---|---|
| 1 | 5+68 | 1.0 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 2 | 9+60 | 4.5 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 3 | 9+64…9+67 | 1.0 | 3.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 4 | 10+06 | 2.0 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 5 | 10+09 | 2.0 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 6 | 11+20 | 0.0 | 1.0 | ծառ |
| 7 | 11+92…12+02 | 0.0 | 1.0 | քարե շինություն |
| 8 | 12+45 | 4.3 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 9 | 12+77…12+88 | 0.1-4.0 | 11.0 | քարե շինություն |
| 10 | 12+78 | 1.0 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 11 | 14+48…14+58 | 0.0-4.0 | 10.0 | քարե շինություն |
| 12 | 16+06 | 4.3 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 13 | 16+32 | 0.5 | 1.0 | 0.4 կՎ էլ. հենասյուն |
| 14 | 16+55 | 3.0 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 15 | 16+64 | 3.0 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| 16 | 17+47 | 0.5 | 1.0 | 10 կՎ էլ. հենասյուն |
| *Ընդամենը* | | | *37.0* | |

- գազատարի ուղեգծում առկա է փոխարինման ենթակա հատված, որի տվյալները բերված են աղյուսակում.

| № | ՊԿ...ՊԿ | Երկարություն մ | Տրամագիծը մմ | Տեղադրման խորությունը, մ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 0+00...17+52 | 1752.0 | 219 | 0.3-2.27 | արոտ, վարելահող, մաս. տարածք, ասֆ. ճանապարհ, հող. ճանապարհ |
| *Ընդամենը* | | *1752.0* | | | |

- տրամագիծը տրված է փաստացի՝ ըստ զննահորի հետազոտության

Ընդհանուր բալային գնահատականը կազմում է 10 բալ:

13.3. Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան համայնքները սնող մ/ճ ստորգետնյա գազատար

- կառուցման տարին - 1997թ.,
- շահագործման ընթացքում վերամեկուսացման աշխատանքներ չեն կատարվել,
- համաձայն ԳԳՄ տվյալների շահագործման ընթացքում հայտնաբերվել է 4 վթար,
- տրամագիծը –219 մմ. խողովակի պատի հաստությունը 4.76-5.98 մմ,
- մեկուսացման տեսակը - բիտում, հաստությունը՝ 0-8 մմ,
- տեղադրման խորությունը – 0.66...2.5 մ,
- գրունտի էլ. տեսակարար դիմադրությունը 291-326 Օմ x մ է, որը համաձայն ԳՕՍՏ 9 602-2016 ունի ցածր կոռոզիոն ակտիվություն,
- գազատարի ուղեգծում առկա է ընդհանուր 33 մ երկարությամբ թվով 1 վերգետնյա հատված՝ ՊԿ 7+07…7+40,
- գազատարն ունի թվով 1 մուտքագիծ,
- գազատարն անցնում է արոտավայրերով, վարելահողերով, ճահճոտ հատվածներով, գետի տակով, մասնավոր տարածքով, ասֆալտապատ և հողածածկ ճանապարհներով,
- գազատարի ուղեգծում առկա են անվտանգ շահագործման գոտու խախտումներ, որոնց տվյալները բերված են աղյուսակում.

| № | ՊԿ | Հեռավորությունը, մ | Երկարություն, մ | Տեղանքը |
|---|---|---|---|---|
| 1 | 0+07…0+17 | 0.8 | 9.0 | տաղավար բետոնե հիմքով |
| 2 | 0+07…0+28 | 0.0-1.5 | 20.0 | ծառեր, այգի |
| 3 | 1+04…1+17 | 0.0 | 13.0 | քարե շինություն |
| 4 | 6+05…6+36 | 0.0-1.5 | 32.0 | ծառեր |
| 5 | 6+92…7+07 | 0.0-1.5 | 15.0 | ծառեր |
| 6 | 7+42 | 0.0 | 1.0 | ծառ |
| *Ընդամենը* | | | *90.0* | |

- գազատարի ուղեգծում առկա են փոխարինման ենթակա հատվածներ, որոնց տվյալները բերված են աղյուսակում.

| № | ՊԿ...ՊԿ | Երկարություն մ | Տրամագիծը մմ | Տեղադրման խորությունը, մ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 0+00...7+07 | 707.0 | 219 | 0.66-2.5 | արոտ, վարելահող, մաս. Տարածք, ճահիճ, գետ, հող. ճանապարհ |
| 2 | 7+40...7+46 | 6.0 | 219 | 06 | արոտ |
| *Ընդամենը* | | *713.0* | | | |

- տրամագիծը տրված է փաստացի՝ ըստ զննահորի հետազոտության

Ընդհանուր բալային գնահատականը կազմում է 9 բալ:

*Որպես կանխարգելիչ հսկողական միջոցառում առաջարկվում է՝*

Համաձայն ՀՀ կառավարության գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոնների և աշխատանքի անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին № 1843 Ն. որոշման, վերանայել ԳԳՄ-ի կողմից իրականացվող շրջայցային գրաֆիկը փոխարինման տրված հատվածներում:

ԱՀ ծառայության պետ ՝ ................................. Գ. Գևորգյան

ԱՀ ծառայության գլխավոր մասնագետ ՝ ................................. Ա. Պապյան

**Филиал «Инженерно-технический центр»**

**Заместитель директора –**

**Главный инженер**

**«Инженерно-технический центр»**

**_____________ О.Г. Испирян**

**«__24__» _______________ 2025 г.**

**Техническая справка-обоснование**

**ТС-О-08-14-25**

о необходимости проведения капитального ремонта подземного газопровода среднего давления, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза

Гаварский ФГГ

**Ереван – 2025**

**Линейная часть**
**Капитальный ремонт подземного газопровода среднего давления, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза**
**км 0 – км 0,746**
**Гаварский ФГГ**

Подземный газопровод среднего давления, питающий село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза км 0 – км 0,746, инвентарный номер №30200068, эксплуатируется Гаварским ФГГ (филиал по газоснабжению и газификации ЗАО «Газпром Армения»). Введен в эксплуатацию в 1974 г.

Участок газопровода смонтирован из труб $D_y$-219 с толщиной стенки 4,76-5,98 мм. Изоляционное покрытие – битум. Глубина залегания 0,66-2,50 м.

При предварительном осмотре технического состояния газопровода среднего давления, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза, установлено наличие паспорта газопровода и аварийных актов.

Данный газопровод обеспечивает газом село Гандзак и село Сарухан Гегаркуникского марза.

Газопровод среднего давления, питающий село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза, проходит по асфальтированным и грунтовым дорогам, пастбищам, пахотным землям, болотистой местности, реке и частным территориям.

Ситуационный план-схема подземного газопровода среднего давления, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза, представлен на Рисунке 1.



***Рисунок 1** – Ситуационный план-схема подземного газопровода среднего давления, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза*

На подземном газопроводе среднего давления, питающем село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза, присутствуют средства электрохимической защиты.

За время эксплуатации подземного газопровода среднего давления, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза, ремонтные работы не проводились, также было выявлено 4 случая утечки газа.

**Результаты электрометрического обследования 2025 года**

Полевые работы по комплексному электрометрическому обследованию на участке подземного газопровода среднего давления, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза км 0 – км 0,746, проведены в 2025 году филиалом «Инженерно-технический центр» ЗАО «Газпром Армения».

По данным обследования коррозионная агрессивность грунтов по удельному электрическому сопротивлению низкая. Данные об удельном сопротивлении грунтов приведены на Рисунке 2.




***Рисунок 2** – Диаграмма распределения удельного сопротивления грунтов*

Воздействие блуждающих токов не выявлено. На всем участке газопровода обнаружены места с предполагаемым нарушением изоляционного покрытия суммарной протяженностью 713 м. Активная защита газопровода присутствует.

Визуальное и контактное обследования коррозионного состояния металла трубы проводились в шурфах (всего 2). При обследовании труб использовались приборы: толщиномер ультразвуковой Булат-3, толщиномер покрытий «Константа К6Ц», комплект для визуального контроля ВИК. Наибольшая глубина коррозионной язвы 0,6 мм, что составляет 12,6% от толщины стенки трубы. Степень коррозии трубы сильная.

**Результаты комплексного обследования участка подземного газопровода, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза км 0 – км 0,746**

Дата ввода газопровода в эксплуатацию – 1974 г.

Наличие ЭХЗ – присутствуют.

Диаметр – $D_У$-219 с толщиной стенки 4,76-5,98 мм.

Изоляционное покрытие – битум.

Глубина залегания – 0,66-2,50 м

Удельное сопротивление грунтов на участке пролегания – 291,0-326,0 Ом·м.

За время эксплуатации ремонтные работы не проводились.

За время эксплуатации на газопроводе среднего давления, питающем село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза, было выявлено 4 случая утечки газа.

На трассе газопровода имеется 1 надземный участок общей протяженностью 33 м.

Нарушение изоляционного покрытия суммарной протяженностью 713 м (100% от длины подземного участка).

Нарушения безопасной зоны эксплуатации было обнаружено в 6 местах. Общая протяженность равна 90 м (12,62% от длины подземного участка).

Суммарная оценка газопровода составила **9 баллов.**

**Выводы и рекомендации**

Суммарная оценка технического состояния газопровода составила **9 баллов**, что соответствует критичному состоянию.

По результатам проведенного диагностического обследования состояние металла труб было оценено на 1 балл.

На основании Сборника руководящих материалов по защите городских подземных трубопроводов (Гл. Технические требования и нормы на замену подземных газопроводов п. 3.2 и 3.4), Методического руководства по диагностике и оценке технического состояния подземного газопровода газораспределительной сети (утвержден ЗАО «Газпром Армения» 05.02.2018 г.) и Регламента «Обоснование для капитального ремонта поземных металлических трубопроводов газораспределительной сети ЗАО «Газпром Армения» от 03.03.23 г. необходимо провести капитальный ремонт посредством замены труб всего участка газопровода с соблюдением минимальных расстояний и глубины залегания (согласно п. 6.1 пп. 73 СН РА 42-01-2023 «Газораспределительные системы» и п. 5.2.1 СП 62.13330.2011 актуализированная редакция СНиП 159-01-2002).

**Приложение**

1. Технический отчет по результатам комплексного обследования подземного газопровода среднего давления, питающего село Гандзак и село Сарухан района Хацарат Гегаркуникского марза – №08-03/25

И.О. Начальника службы УТС и ЦГС
филиала «Инженерно-технический центр»
ЗАО «Газпром Армения» Т.О. Василян

И.О. Главного специалиста службы УТС и ЦГС
филиала «Инженерно-технический центр»
ЗАО «Газпром Армения» А.В. Тербушева

**Spartak Martoyan**

| | |
|---|---|
| **From:** | Urban Gazprom Armenia <urbangazpromarmenia@gmail.com> |
| **Sent:** | 19 մարտի, 2026 10:58 |
| **To:** | Spartak Martoyan |
| **Subject:** | Fwd: Հետագիծ-ուրվագծի համաձայնեցման դիմումի ՀԱՍՏԱՏՄԱՆ ծանուցում |

---------- Пересылаемое сообщение ---------
От: <permits-backend@e-gov.am>
Дата: Вт, 17 марта 2026 г. в 14:15
Тема: Հետագիծ-ուրվագծի համաձայնեցման դիմումի ՀԱՍՏԱՏՄԱՆ ծանուցում
Кому: <urbangazpromarmenia@gmail.com>

Հարգելի **ԱԾՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ**,

**«Հետագիծ-ուրվագծի համաձայնեցման դիմում»** ծառայության դիմումը **ՀԱՍՏԱՏՎԵԼ Է:**

Նշումներ ծառայությունը մատուցողի կողմից՝ **Նշումներ չկան**,

Դիմումի հսկիչ համարն է՝ **PMB2-899E-219F-A831:**

Հայտի հետագա ընթացքին կարող եք հետևել https://urban-permits.e-gov.am/ հասցեով «Իմ հայտերը» բաժնում, ինչպես նաև ստանալով ծանուցումներ դիմումում նշված էլ-փոստի հասցեին:

Դիմումի մանրամասները ստորև՝

| | |
|---|---|
| Ծառայության տեսակը | Ծառայություն մատուցող |
| **Հետագիծ-ուրվագծի համաձայնեցման դիմում** | **ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ** |
| Կառուցապատող | Կառուցապատվող գույքի հասցե |
| **«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՀՎՀՀ՝ 00046317** | **ՀՀ,Գեղարքունիքի մարզ,Գավառ համայնք,գ.Գանձակ** |

Հարգանքով,
Կառուցապատման թույլտվությունների միասնական համակարգի թիմ

2026-03-17 14:15:53

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## *Հիմքեր նախագծի մշակման համար*

Սույն աշխատանքային նախագիծը կազմված է համաձայն՝

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 16.12.2025թ. № Ն/29/8531-2026 գրություն
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 12.02.2026թ. տեխնիկական առաջադրանք
3. Գավառի ԳԳՄ 26.12.2025թ. տեխնիկական պայմաններ
4. «Ինժեներատեխնիկականկան կենտրոն» մասնաճյուղի ստորգետնյա գազատարի կոռոզիոն վիճակի հետազոտման արդյունքների ՕԲՑԵԿՏ ԳԲՑ №08-03/25
5. Հետազիծ-ուրվագիծ համաձայնեցման ծանուցում

## *Օբյեկտի բնութագիր*

Նախագծով նախատեսված է Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ գազատարի վերանորոգում, որի համար կատարվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազման աշխատանքներ:

Նախագծով նախատեսվում է

1. ստորգետնյա մ/ճ գազատարի վերատեղադրում պոլիէթիլենային ՊԷ100 SDR17.6 Ø315x17.9մմ, ԳՕUS P50838-09 խողովակներից H=1.0մ խորությամբ (հաշված խողովակի վերին եզրից),
2. վերգետնյա գազատարի մոնտաժում՝ պողպատյա էլեկտրաեռակցվող Ø273x6.0մմ, համաձայն ԳՕUS 10704-91

Նախագծում ընտրված բոլոր սարքավորումները նախատեսված են բնական գազով աշխատելու համար:

Ինժեներա-երկրաբանական եզրակացության համաձայն տարածքի գրունտները ներկայացված են հետևյալ տարատեսակներով.

Ասֆալտ՝ (խճավազ խիճ, կոպիճներ ավազային լցիչով): Տեխնիկական շերտ՝ 12.IVբ կարգ;

Ավազակավ՝ խճի, խճավազի պարունակությամբ՝ III կարգ:

*Խողովակների ընտրությունը*

Ելնելով տրված աշխատանքային շահագործման պայմաններից և ճնշումից, խողովակների նյութը ընտրում ենք համաձայն ԳՕՍՏ 10704-91 և ԳՕՍՏ Р50838-09:

*Խողովակների տեղադրումը և միացումը*

Գազատարի տեղադրումը ստորգետնյա եղանակով նախատեսված է պոլիէթիլենային և պողպատե խողովակներից:

Պոլիէթիլենային խողովակի տեղադրումը կատարվում է բաց խրամուղում, որի նվազագույն խորությունը պետք է լինի 1.0մ-ից ոչ պակաս՝ հաշված խողովակի վերնից: Գազատարի տեղադրման աշխատանքները պետք է կատարել -15°C +30°C ջերմաստիճանի պայմաններում, ընդ որում, ձմռանը՝ օրվա ամենատաք ժամերին, իսկ ամռանը՝ ամենացուրտ ժամերին: Երկարաչափ խողովակների քանդումը կծիկներից պետք է կատարել շրջապատի օդի +5°C-ից ոչ պակաս ջերմաստիճանի դեպքում: Խրամուղիներում և փոսերում թույլատրվում է կատարել պոլիէթիլենային խողովակների շրջադարձ բնական ճկվածքով 25 արտաքին տրամագծի չափից ոչ պակաս շառավիղի թեքությամբ: Տեղադրվող գազատարի տակ նախատեսված է ավազե նստաշերտ 10 սմ հաստությամբ և ծածկում 20 սմ հաստությամբ ավազե շերտով: ՊԷ գազատարի ուղեգծի տեղը որոշելու համար նախատեսվում է գազատարի երկայնքով 20 սմ բարձրության վրա գազատարի վերին եզրից տեղադրել պոլիմերային ազդանշանային ժապավեն դեղին գույնի 20սմ-ից ոչ պակաս լայնությամբ՝ չլվացվող «Գազ» գրառությամբ, իսկ այլ ստորգետնյա կոմունիկացիաների հետ հատման տեղերում ժապավենը փռել երկու շերտով, իրարից 20 սմ-ից ոչ պակաս հեռավորության վրա և երկուական մետր հատվող կառույցի երկու կողմից: Ծածկումից և ազդանշանային ժապավենի տեղադրումից հետո թույլատրվում է կատարել ետլիցք քանդված գրունտով առանց քարերի: Ստորգետնյա հաղորդակցուղիների հետ հատման տեղամասերում նախատեսվում է ազդանշանային ժապավենի լրացուցիչ տեղադրում 25 սմ խորությամբ հաշված հողի մակերեսից:

Յոթ և ավելի բալ սեյսմիկություն ունեցող շրջաններում գազատարների հավաքակցման ժամանակ պետք է օգտագործել ոչ պակաս 2.8 ամրության պաշարի գործակից ունեցող պոլիէթիլենային խողովակներ: Խողովակների միացումը միմյանց նախատեսվում է կցվանքային և կցորդչային եռակցմամբ: Կցվանքային բոլոր միացումները ենթարկվում են 25% ստուգման, ուլտրաձայնային մեթոդով (УЗК):

Եռակցման աշխատանքները թույլատրվում է կատարել շրջապատի օդի -15°C մինչև +45°C ջերմաստիճանի պայմաններում: -15°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում եռակցումը կատարվում է հատուկ ծածկի տակ՝ ջերմաստիճանը հասցնելով տեխնոլոգիականին:

Ստորգետնյա ՊԷ գազատարի ուղեգիծը շահագործման ընթացքում գտնելու համար լրացուցիչ նշվում է ազդանշանային պղնձյա մեկուսացված լարի տեղադրմամբ, գազի հոսքի ուղղությամբ 20սմ դեպի աջ: Լարի ծայրերը դուրս են բերվում հողից գազատարի «մուտք» և «ելք» կետերում պատյանի մեջ ինչպես նաև հսկիչ կետերում:

Գազատարի «մուտք հող» և «ելք հողից» կետերում նախատեսված է գազատարի անցկացում պողպատյա պատյաններով՝ մեխանիկական վնասվածքներից պաշտպանելու համար, իսկ ավտոմոբիլային ճանապարհների հատման տեղերում՝ պատյաններով, ստուգիչ խողովակների՝ մոմի, առկայությամբ: Պատյանները նախատեսված են ՀՀՇՆ 42-01-2023-ի «Գազաբաշխիչ համակարգեր» գլուխ 6 կետ 58, գլուխ 6.1 կետ 75-77, գլուխ 6.4 կետ 100-102 պահանջներին և ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N539-Ն որոշման բաժին 2 գլուխ 2 կետ 34-38, բաժին 3 կետ 147 համապատասխան:

Պողպատյա գազատարների և ձևավոր մասերի միացումները նախատեսված են էլեկտրաաղեղնավոր կամ գազային եռակցմամբ:

### *Գազատարների փորձարկումը*

Գազատարները, տեղադրումից հետո, ենթակա են փչամաքրման և փորձարկման:

Շինարարության ավարտից հետո պետք է կատարվեն գազատարների հերմետիկության փորձարկում օդով:

Հերմետիկության փորձարկումը կատարվում է գազատարի մեջ սեղմված օդի մատուցմամբ, որի ճնշումը հասցվում է փորձարկման ճնշմանը:

Գազատարների փորձարկման նորմաները ընդունել համաձայն ՀՀՇՆ 42-01-2023-ի համապատասխան:

Պոլիէթիլենային գազատարների փորձարկման ընթացքում արտաքին օդի ջերմաստիճանը չպետք է լինի -15 °C ցածր:

Փորձարկման ընթացքում հայտնաբերված արատները պետք է վերացվեն գազատարում ճնշումը մինչև մթնոլորտայինի իջեցնելուց հետո:

Արատները վերացնելուց հետո գազատարի հերմետիկության փորձարկումը պետք է կրկնվի:

Բոլոր եռակցակարերը, որոնք կատարվել են փորձարկումներից հետո, պետք է ստուգվեն ֆիզիկական մեթոդով:

*Գազատարի պաշտպանությունը կոռոզիայից*

Նախագծում գազատարի տեղադրումը նախատեսված է վերգետնյա և ստորգետնյա եղանակով: Վերգետնյա եղանակով տեղադրվող գազատարները շրջակա միջավայրի ազդեցությունից պաշտպանելու համար նախատեսված է կրկնակի յուղաներկում:

Գազատարի ստորգետնյա հատվածը նախատեսված է տեղադրել պողպատյա խողովակներով, որոնց պաշտպանությունը կոռոզիայից իրականացվում է պասիվ եղանակով "PAM" տիպի մեկուսացումով: Մինչ մեկուսացման աշխատանքները կատարելը անհրաժեշտ է խողովակի արտաքին մակերեսի մաքրում, ժապավենի կպչողականությունը ապահովելու համար:

*Եզրակացություն*

Նախագիծը մշակված է համաձայն գործող ՀՀՇՆ 42-01-2023 «Գազաբաշխիչ համակարգեր» տեխնիկական կանոնակարգի պահանջների:

Աշխատանքները սկսելուց առաջ պետք է նշանակվի տեխնիկական հսկողության ներկայացուցիչ պատվիրատուի կողմից:

Նախագծից բոլոր շեղումները պետք է համաձայնեցվեն պատվիրատուի, շահագործող կազմակերպության և նախագծի հեղինակի հետ:

*Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները*

Նախագծով ընդունված բոլոր տեխնիկական լուծումները բացառում են շրջակա միջավայրի աղտոտումը գազատարների նորմալ շահագործման պայմաններում: Շրջակա միջավայրի աղտոտումը հնարավոր է միայն վթարների ժամանակ: Վթարները բացառելու համար գազատարը ենթարկվում է փորձարկման համաձայն ՀՀՇՆ 42-01-2023 «Գազաբաշխիչ համակարգեր»: Խողովակների միացման մասերում քայքայումը կանխելու համար նախատեսվում է եռակցակարերի ստուգում ֆիզիկական մեթոդներով:

Բնության պահպանության նպատակով անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները

- շինարարության համար հատկացված տարածքի սահմանների պարտադիր պահպանություն

- շին. հրապարակի աշխատանքային տեղերի կենցաղային և շինարարական թափոնների համար բեռնարկղերով հագեցվածություն

- դյուրավառ և քսայուղերի դատարկումը միայն հատուկ առանձնացված տեղերում

- ամբողջ ծավալով հողերի վերականգնման միջոցառումների իրականցում

- բնապահպանական տեղական մարմինների պահանջների ապահովում

*Կազմեց* *Շ. Գասպարյան*

## Կ Ի Ր Ա Ռ Ո Ւ Մ

I. *Նախագծային աշխատանքներ.*

Նախագիծը կազմվել է համաձայն ՀՀ-ում գործող նորմերի և կանոնների՝

ՀՀՇՆ 42-01-2023, լիցենզիա № ՔՊԼ-001223 էներգետիկ ոլորտի:

II. *Նախահաշիվ. (տես նախագծի «նախահաշիվ» մասում)*

III. *Կապալի օբյեկտի առանձին մասերի կոնստրուկցիաներին և օգտագործվող նյութերին ներկայացվող պահանջները.*

Բոլոր օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն արտադրողի կողմից տրամադրված որակի չափանիշներին (սերտեֆեկատի պայմաններին):

IV. *Կապալի աշխատանքի կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները.*

ա/ կապալառուն տվյալ օբյեկտի աշխատանքները կատարելու համար պետք է ունենա քաղաքաշինության բնագավառի էներգետիկ լիցենզիա

բ/ մոնտաժային աշխատանքների համար անհրաժեշտ գործիքներ

գ/ տվյալ աշխատանքները կատարելու համար կապալառուն պետք է ունենա գազաեռակցող և փականագործ

դ/ գազաեռակցողը պետք է ունենա ոչ պակաս 5 տարվա աշխատանքային փորձ, փականագործը պետք է ունենա ոչ պակաս 3 տարվա աշխատանքային փորձ

V. *Առաջարկություններ.*

ա/ կապալի օբյեկտի շինարարության ավարտից հետո շին մոնտաժային աշխատանքների որակի երաշխիքային ժամկետ է սահմանված 3 տարի

բ/ պատվիրատուն շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում պետք է իրականացնի մշտական տեխնիկական հսկողություն, դրանց արդյունքները գրանցելով շինարարության վարման մատյանում և ձևակերպելով համապատասխան ակտերով

գ/ շին. մոնտաժային աշխատանքների սկսման պահից մինչև ավարտը պավիրատուն, նախագծային կազմակերպության միջոցով, պետք է իրականացնի հեղինակային հսկողություն:

Պարբերականությունը և ժամկետները սահմանվում են պատվիրատուի և նախագծային կազմակերպության միջև կնքված պայմանագրով:

<u>Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից</u>
<u>Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ գազատարի վերանորոգում</u>

# ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ բնակավայրի կառուցվող գազատար խողովակի ուղեգծի ինժեներաերկրաբանական կառուցվածքի, գրունտների կարգի պարզաբանման նպատակով, համապատասխան ՀՀՇՆ-1-2,01-99-ի, տրվում են նախկինում տվյալ հատվածներին մոտ ինժեներաերկրաբանական հետազննման հիման վրա տվյալներ:

**<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u>** ուսումնասիրվող տարածքում ստորերկրյա ջրերը գտնվում են 10,0 մետրից խորը հորիզոններում:

**<u>Ֆիզիկաերկրաբանական</u>** վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում ուղեգծի գոտիով՝ բացակայում են:

**Շրջանի սեյսմիկ պայմանները**

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04-2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:

Գազաֆիկացվող ուղեգծի համար գրունտները տրվում են մինչև 3.0 մ խորությամբ. (տես ստորև):

**ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գանձակ բնակավայրի կառուցվող գազատար խողովակի ուղեգծի գրունտները հետևյալն են.**

**Ուղեգծով գրունտները հետևյալն են՝**

**Շերտ1 0.0-3.0մ** Ավազակավ՝ խճի, խճավազի պարունակությամբ:
Ծավալային կշիռը՝ 1.75տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 250կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 33.4) III կարգ է:

- Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 1,14 մետր:
- Ուսումնասիրվող տեղամասում գրունտները կարող են ծառայել, որպես հիմնատակ:
- Խրամուղիների կամ փոսորակների բացման ժամանակ, հարկ լինելու դեպքում, ինժեներ երկրաբանի կողմից կատարել գրունտների զզնում:

Ինժեներ-երկրաբան Դ. Աստրյան

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Միջին ճնշման գազատարի վթարային հատվածների ստորգետնյա (ՊԷ խողովակ), վերգետնյա (պողպատե խողովակ) եղանակներով վերատեղադրման համար նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝

- Խրամուղու և փոսերի քանդում
- Ավազի նստաշերտի ստեղծում
- ՊԷ խողովակի հավաքակցում և տեղադրում խրամուղում
- Խրամուղու հետլիցք
- Բետոնե հիմքերի իրականացում հասունացում
- Հենասյուների տեղադրում
- Պողպատե խողովակի վերգետնյա տեղադրում,
- Գազատարի զոդակարերի ստուգում
- Գազատարի փչամաքրում և փորձարկում
- Տարածքի տոփանում մեխանիզմով

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է համաձայն հետևյալ գործող նորմատիվ փաստաթղթերի՝ ՀՀՇՆ 22-01-2024, ՀՀՇՆ I-3.01.01-2008, ՀՀՇՆ 13-05-2026, ՀՀՇՆ 42-01-2023, ՀՀՇՆ 13-02-2022 և ՀՀ քաղաքաշինության նախազահի 2025 թվականի մարտի 5-ի N 07-Ն հրամանով հաստատված «Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման ուղեցույց»:

Աշխատանքները իրականացվում են ընդունված շինարարական մեթոդներով:

## Հիմնական շինարարական մեքենաներ, մեխանիզմներ և տրանսպորտային միջոցներ

Շինանյութերի մատակարարումը շինհրապարակ իրականացվում է գոյություն ունեցող ավտոճանապարհներով: Ավտոտրանսպորտի և շինտեխնիկայի մոտեցումը իրականացվում է գոյություն ունեցող ավտոճանապարհներով գազատարի ուղեգծի երկայնքով: Հիմնական մեքենաների, մեխանիզմների և փոխադրման միջոցների տեսակը և քանակը որոշվում է համապատասխան շինմոնտաժային աշխատանքների ֆիզիկական ծավալներին, շինանյութերի քաշին և շինարարության կազմակերպման ընդունված մեթոդներին: Ոչ աշխատանքային ժամերին շինարարական մեքենաները և մեխանիզմները պետք է հեռացվեն շինարարական աշխատանքների տարածքից հատուկ հատկացված տարածք:

Աշխատանքները իրականացվում են համայնքային տարածքներում փոքրագաբարիտ մեխանիզմներով: Աշխատանքները պետք է կազմակերպել այնպես, որ չխափանվի ճանապարհային երթևեկությունը:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր ցանկ՝

| N/N | Անվանում | Քանակ |
|---|---|---|
| 1 | Էքսկավատոր 0. 5մ$^3$շերեփի տարողության | 1 |
| 2 | Կողային ավտոինքնաթափ 20տ բեռնունակության | 2 |
| 3 | Ավտոինքնաթափ 20տ բեռնունակության | 2 |
| 4 | Ամբարձիչ 10տ բեռնունակության | 1 |
| 5 | Խողովակ տեղադրող մեխանիզմ | 2 |
| 6 | Պնևմատիկ տոփանիչ | 1 |
| 7 | Ձեռքի տոփան | 1 |
| 8 | ՊԷ խողովակների եռակցման սարք | 1 |
| 9 | Պողպատե խողովակների եռակցման սարք | 1 |

Այդ ցանկը ճշտվում է շինարարության ընթացքում:

Բացի հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկից, ավտոմոբիլային ճանապարհի հետ հատման հատվածում, փակ եղանակով խողովակի տեղադրման համար, հորիզոնական հորատման համար նախատեսվում է օգտագործել մասնագիտացված սարքեր և սարքավորումներ:

Շինմոնտաժային աշխատանքներից առաջացած շինարարական աղբը ժամանակավոր կուտակվում է դրա համար հատկացրած տարածքում, որտեղից բարձվում է ինքնաթափ և հեռացվում շինհրապարակից: Պարադիր պայման է՝

աղբակույտի կարճաժամկետ կուտակում:

Շինարարական և կենցաղային աղբը հեռացվում է ≈7կմ հեռավորության վրա:

## Ջրի և էներգետիկ ռեսուրսների ապահովում

Շինարարության ապահովումը ջրով, էներգիայով իրականացվում է՝

- էլեկտրաէներգիայով՝ շարժական էլեկտրակայանից;
- սեղմված օդով՝ ПК-10 տիպի շարժական ճնշակայանքից;
- վառելանյութերով՝ տեղում ձեռքբերելով;
- ջրով տնտեսական կարիքների համար՝ բերովի ջուր:

Կենցաղային կարիքները հոգալու համար ջրի անհրաժեշտ քանակությունը բերվում է շարժական անոթներով (передвижная емкость): Հրդեհի մարման համար ջուրը բերովի է (ջրի հաշվարկային ծախսը համաձայն նորմերի կազմում է 15լ/վրկ): Խմելու ջրի պահանջարկի հաշվարկը կատարվում է հաշվի առնելով հերթափոխում ամենաշատ աշխատողների քանակը և շինարարության տևողությունը՝ հերթափոխում 3 լիտր ջուր մեկ աշխատողի համար:

Կապի միջոցը շինհրապարակում որոշում է շինարարական կազմակերպությունը: Էլեկտրաէներգիայի, օդի, վառելանյութի, ջրի պահանջվող քանակը (կազմակերպության մեքենաների և մեխանիզմների առկա բազային համապատասխան) կվորոշվի շինմոնտաժային աշխատանքները սկսելուց առաջ շինարարական կազմակերպության կողմից:

## Շինարարության տևողություն

Շինարարության տևողությունը հաշվարկված է համաձայն ՍՆիՊ 1.04.03-85*-ի, մաս II, ելնելով աշխատանքների ծավալից և աշխատատարությունից (трудоемкость), բետոնի հասունացման շրջանից (28 օր), հաշվի առնելով սեյսմակայունության, բարձրալեռնայնության գործակիցները և կազմում է ≈2,2 ամիս: Աշխատանքի ժամանակը կրճատելու համար նախատեսվում է աշխատանքները համատեղել (с целью сокращения сроков выполнения работ планируется совмещение работ по времени):

Նախագծում մշակված է շինարարական աշխատանքների իրականացման օրացուցային գրաֆիկ:

# ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

| N/N | Աշխատանքների անվանում | Տևողություն, օր | Բրիգադի կազմը | Աշխատանքների տևողությունը ըստ ամիսների | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III |
| | | | | ըստ օրերի | | |
| | | | | 22 աշխ. օր | 22 աշխ. օր | 22 աշխ. օր |
| 1 | Նախապատրաստական աշխատանքներ | 15 | | | | |
| 2 | *Ստորգետնյա գազատարի տեղադրում պոլիէթիլենե խողովակներից L=912մ (ներառյալ ճանապարհի հատվածում հորատումով L=13մ)* | 34 | էքսկավատորի մեքենավար (экскаваторщик)-1, հողափոր )-2, ամբարձիչի մեքենավար-1, խողովակ տեղադրող մեխանիզմ-2, մոնտաժող-3, զոդող-3, մեկուսիչ աշխատանքների բանվոր և ներկարար (изолировщик)-2, բետոնագործ-1 | | | |
| | խրամուղու քանդում, 0.1մ նստաշերտի ստեղծում ավազով | | | | | |
| | խողովակների հավաքակցում և խողովակաշարի տեղադրում խրամուղի | | | | | |
| | խողովակների ծածկում ավազով 0.2մ և խրամուղու ետլիցք | | | | | |
| 3 | *Վերգետնյա գազատարի տեղադրում պողպատե խողովակներից (L=55 մ)* | | | | | |
| | փոսերի քանդում | 1 (+28) | | | | |
| | հիմքերի իրականացում B12.5 դասի բետոնից | | | | | |
| | մետաղական հենասյուների տեղադրում, գազախողովակի տեղադրում հենասյուների վրա և կամրջին ամրացումով, ներկում յուղաներկով, նախաներկումով | 3 | | | | |
| 4 | "Մուտք հող" և"Ելք հողից" հատվածներում ստորգետնյա գազատարի տեղադրում պողպատե խողովակից պատյանով (մեկուսացումով ''PAM'' տիպի ամրանավորված ժապավենային մեկուսիչով) | | | | | |
| 5 | Գազատարի զոդակարերի ստուգում, փչամաքրում և փործարկում | | | | | |
| 6 | Տարածքի տոփանում | | | | | |

— — — — — – աշխատանքների իրականացում ընդմիջումներով

———————— – աշխատանքների իրականացում առանց ընդմիջումների

------------- – բետոնի հասունացման շրջան (28 օր)

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՇԱՐԺՄԱՆ ԳՐԱՖԻԿ



## Աշխատուժի պահանջարկ

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1 հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով (նախնական բրիգադների քանակը նշված է օրացուցային գրաֆիկում): Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալների և շինարարության տևողությանը: Աշխատուժի պահանջարկը (բանվորների, բրիգադների և հերթափոխի քանակը), որը մշակված է շինարարության կազմակերպման նախագծում ճշտվում է շինմոնտաժային աշխատանքները սկսելուց առաջ:

Ընդհանուր աշխատողների թիվը՝ R = R բ + Rիտա + Rծ + R կսպ, որտեղ

Rբ-ն ՝ բանվորների քանակն է,

Rիտա -ն՝ ինժեներատեխնիկական անձնակազմիթիվը,

Rծ-ն ՝ ծառայողների թիվը,

R կսպ –ն՝կրտսեր սպասարկող անձնակազմի թիվը:

R բ = Rh + Ro, որտեղ

R h – հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների թիվն է,

R o – օժանդակ աշխատանքների վրա զբաղված աշխատողների թիվը:

R o-ն = 0.2 R բ, R բ = 1.2xR max, R max =14

R բ = 1.2xR max = 1.2x 14=17 մարդ

Համաձայն նորմատիվ փաստաթղթերի աշխատողների թիվը ըստ կատեգորիաների՝

| Անվանում | Աշխատողների քանակը, մարդ |
|---|---|
| Աշխատողներ, այդ թվում: | 21 |
| - բանվորներ (83.4%) | 17 |
| - ինժեներա-տեխնիկական կազմ (9%) | 2 |
| - ծառայողական կազմ (5.9%) | 1 |
| - սպասարկող և պահակային կազմ (1.7%) | 1 |

## Ժամանակավոր շենքեր և շինություններ

Աշխատանքները իրականացնելու համար տարածքում պետք է հատկացվի հարթակ ժամանակավոր շենքեր և շինություններ տեղակայելու համար: Քանի որ աշխատանքները կատարվելու են համայնքի տարածքում, այդ հարցերի լուծումը տալիս է շինարարական կազմակերպությունը՝ համաձայնեցնելով տեղական կառավարման մարմինների հետ:

Բանվորների սպասարկման հարցերը պետք է կարգավորի շինարարական կազմակերպությունը, որը պետք է նախատեսի ժամանակավոր շենքեր և շինություններ (աշխղեկի գրասենյակ, վագոն – հանդերձարան, զուգարան և այլն):

**Նախապատրաստական աշխատանքներ**

Հիմնական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է կատարել նախապատրաստական աշխատանքների կոմպլեքս՝

- նախազգուշացնող նշանների և ազդանշանային լապտերի շարանի տեղադրում;
- շինհրապարակի տարածքի ցանկապատում և վտանգավոր գոտիների սահմանների նշում;
- շինհրապարակի լուսավորության ապահովում;
- մուտքի մոտ տեղադրվում են նախազգուշացնող վահանակներ՝ օտար անձանց կողմից շինարարության տարածք մուտքը կատեգորիկ արգելելու մասին, և համապատասխան վերահսկողության կազմակերպում ՝դա կանխելու համար;
- նախապատրաստվում են սանիտարա-կենցաղային սենքեր (ժամանակավոր) բանվորների համար;
- շինանյութերի պահեստավորման համար հարթակների նախապատրաստում;
- շինարարական մեքենաները և մեխանիզմները տեղակայվում և փորձարկվում են ըստ ցանկի;
- օբյեկտի մատակարարում շինարարական տեխնիկայով, սարքավորումներով և շինանյութով;
- բեռնաթափման աշխատանքների կազմակերպում;
- անվտանգ կատարման համար նախատեսված գույքի, սարքերի և միջոցների նախապատրաստում և տեղադրում բրիգադի աշխատանքների գոտում;
- աշխատողների ծանոթացում տեխնոլոգիային;
- շրջակա միջավայրի պահպանության և աշխատանքի անվտանգության միջոցառումների իրականացում:

## Հիմնական աշխատանքներ

Նախապատրաստական աշխատանքները ավարտելուց հետո սկսվում են հիմնական աշխատանքները:

### *Հողային աշխատանքներ*

Խրամուղու և փոսերի քանդումը III կարգի բնահողերում իրականացվում է էքսկավատորով և ձեռքով: Խրամուղու հատակին գազատարի տակ ստեղծվում է ավազի նախապատրաստական շերտ δ=0.1մ և իրականացվում է խողովակի շուրջ պաշտպանիչ շերտ ավազից δ=0.2մ: Ավազի նստաշերտը խողովակի շուրջ տոփանվում է ձեռքի տոփաններով, ստանալով նախագծային խտություն: Հետլիցքը իրականացվում է տեղի փափուկ բնահողից:

Նախապատրաստական շերտի համար ավազը բերվում է ինքնաթափերով և ստեղծվում է ավազի ժամանակավոր կույտ: Ավելորդ բնահողը բեռնվում է ավտոինքնաթափի և տեղափոխվում 7կմ հեռավորության վրա:

### *Բետոնային աշխատանքներ*

Բետոնային աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան ՀՀՇՆ 52-01-ի պահանջներին: Նախագծով նախատեսվում է հիմքերի (հենասյուների տակ) իրականացում B12.5 դասի միաձույլ բետոնից: Բետոնի հասունացման շրջանը կազմում է 28 **օ**: Բետոնային աշխատանքները նախատեսվում է իրականացնել տարվա չոր եղանակային պայմաններում:

### *Գազատարի կառուցում պոլիէթիլենե խողովակներից*

Պոլիէթիլենե գազատարը անհրաժեշտ է տեղադրել օձագալար (змейкой): Ստորգետնյա եղանակով գազատարը տեղադրվում խրամուղում նախապատրաստված հիմքի վրա: Հետլիցքը պետք է իրականացնել ամռանը՝ օրվա հով ժամանակահատվածում, իսկ ձմռանը՝ օրվա տաք ժամանակահատվածում:

*Պոլիէթիլենե խողովակների չկազմատվող միացություն*

Պոլիէթիլենե խողովակների չկազմատվող միացությունը իրականացվում է 2 մեթոդներով՝ կցվածքային եռակցում (сварка встык нагретым инструментом) և կցորդչային եռակցում (сварка при помощи соединительных деталей с закладными нагревателями):

*Կցվանքային եռակցում*

Կցվանքային եռակցման հիմքն է՝ տաքացնող գործիքի միջոցով խողովակների ծայրերի միաժամանակ մակահալումը:

Այս մեթոդով իրականացվում է այն խողովակների միացությունը, որոնց պատի հաստությունը 5մմ մեծ է և օդի ջերմաստիճանը -15⁰C ÷ +40⁰C:

Տեխնոլոգիական պրոցեսը անցնում է հետևյալ հերթականությունով՝

– խողովակների ծայրերը ամրացվում են;

– խողովակների ծայրերը անցնում են մեխանիկական մշակում;

– ստուգվում է խողովակների ծայրերի համնկման ճշգրտությունը և համառանցքությունը (соосность);

– եռակցվող մակերևույթի մակահալումը և տաքացումը տաքացնող գործիքով;

– տաքացնող գործիքի հեռացումը եռակցման գոտուց;

– կցվանքի հաստւնացում (осадка стыка), որի արդյունքն է եռակցված միացությունը (сварное соединение);

– եռակցվող միացության ապամոնտաժ կենտրոնավորիչ (центратор) սեղմակներից:

*Կցորդչային եռակցում*

Եռակցումը ներդիր տաքացիչ (ЗН) դետալներով կարելի է օգտագործել ցանկացած տրամագծի և երկարության խողովակների միացության համար: Այս մեթոդի իմաստն է՝ ներդիր տաքացիչ տաքացնում է խողովակի և դետալի հպման մակերևույթը: Արդյունքում հալում և խառնվում են հպման մակերևույթի նյութերը, որոնք հովացումից հետո իրենցից ներկայացնում են միաձույլ զանգված:

Տեխնոլոգիական պրոցեսը անցնում է հետևյալ հերթականությունով՝

– խողովակների ծայրերի նախապատրաստում;

– կցվանքի հավաքում (եռակցվող խողովակների ծայրերի տեղադրում և ամրացում կենտրոնավորիչ (центратор) սեղմակներով, միաժամանակ տեղադրելով ներդիր տաքացիչ (ЗН) դետալը);

– ներդիր տաքացիչ (ЗН) դետալի միացում եռակցման ապարատին;

– եռակցման պրոցեսի գործարկում (տաքացում);

– միացության հովացում;

– կենտրոնավորիչ (центратор) սեղմակների հեռացում:

*Չկազմատվող միացություն "պոլիէթիլեն - պողպատ"*

Չկազմատվող միացությունը "պոլիէթիլեն - պողպատ" իրականացվում է մեխանիկական մեթոդով, լրացուցիչ ամրացնելով և պաշտպանելով մետաղական և պոլիէթիլենե կարճախողովակների միացման տեղը:

Առաջարկվում է "պոլիէթիլեն - պողպատ" անցումի եռակցումը իրականացնել պողպատե խողովակի հատվածի սկզբում (L=1մ) արհեստանոցում, որտեղ հնարավոր է ապահովել անհրաժեշտ ջերմաստիճանը պողպատե և պոլիէթիլենե կարճախողովակի միացության գոտու համար, բացառելով հալույթի կաթիլների ընկնումը անցումի պոլիէթիլենե հատվածի վրա:

Նախագծով նախատեսվում է գործարանային արտադրության "պոլիէթիլեն - պողպատ" անցում, որի միացումը խողովակին իրականացվում է կցորդիչով:

Ի տարբերություն պողպատե խողովակների եռակցման աշխատանքներից, պոլիէթիլենե խողովակների եռակցումը իրականացվում է միաժամանակ եռակցման ենթակա մակերևույթի ամբողջ մակերեսով:

Պոլիէթիլենե խողովակները տեղափոխելու և երկարաժամկետ պահելու ընթացքում ձևափոխվում են: Այդ պատճառով եռակցման աշխատանքները սկսելուց առաջ խողովակների ծայրերը պետք է մշակվեն հատուկ գործիքներով:

ՊԷ խողավակաշարը տեղադրվում է մեխանիզմով և ձեռքով՝ օգտագործելով գոտիներ, ճոպաններ, սրբիչներ:

Ասֆալտապատ ճանապարհի հետ հատման հատվածում նախատեսված է ստորգետնյա ՊԷ գազատարը անցկացնել պողպատյա պատյանի միջով: Պողպատե պատյանը նախատեսվում է տեղադրել փակ եղանակով (հորիզոնական հորատում):

Նախագծում ներկայացված է ճանապարհի հետ նախագծվող գազատարի հատման հատակագիծ; պոլիէթիլենային խողովակաշարի տեղադրման սխեմա պաշտպանիչ պատյանի մեջ; գազատարի կառուցման տեխնոլոգիական սխեմա պոլիէթիլենե (ՊԷ) խողովակներից:

# ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԵՏ ՆԱԽԱԳԾՎՈՂ ԳԱԶԱՏԱՐԻ ՀԱՏՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ




## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ՝

— Գոյություն ունեցող միջին ճնշման ստորգետնյա գազատար

пэ — Նախագծվող միջին ճնշման ստորգետնյա ՊԷ գազատար

пэ — Պաշտպանիչ պատյան ստուգիչ խողովակով

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Նախագծվող գազատարի կառուցումը ճանապարհի հետ հատման հատվածում իրականացվում է փակ եղանակով հետևյալ հերթականությունով՝

- աշխատանքային և ընդունման փոսորակների կառուցում;
- պաշտպանիչ պատյանի տեղադրում հորիզոնական հորատումով;
- ՊԷ գազատարի անցկացում պատյանով;
- հակադարձ լիցք:

Ուշադրություն! Կոմունիկացիայի անվտանգ գոտում բոլոր աշխատանքները պետք է կատարվեն գրավոր թույլտվությամբ՝ տվյալ կոմունիկացիան շահագործող կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ:

Սխեման կատարված է առանց մասշտաբի:

# ՊՈԼԻԷԹԻԼԵՆԱՅԻՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՍԽԵՄԱ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՊԱՏՅԱՆԻ ՄԵՋ




## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ՝

1 - կարապիկ (лебедка)

2 և 3 - հենարանային հոլովակ ճոպանի համար

4 - պոլիէթիլենային խողովակների թմբուկով մեքենա

5 - պոլիէթիլենային խողովակ

6 - պաշտպանիչ պատյան

7 -ճանապարհ

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

1. Պաշտպանիչ պատյանի հատվածում խողովակաշարի վրա տեղադրվում են օղակաձև ուղղորդիչ հենարաններ (հոլովակավոր)։
2. Խողովակաշարի տեղադրումը պաշտպանիչ պատյանի մեջ իրականացվում է խողովակաշարի ներքաշումով պոլիէթիլենային խողովակների թմբուկով մեքենայի և կարապիկի օգնությամբ։
3. Խողովակաշարի տեղադրումից հետո իրականացվում է պատյանի ծայրերի հերմետիկացում բիտումով, փրփրանյութով։
4. Գազատարի տեղադրումը (նախագծային նիշերի վրա) ստուգելուց և հաստատելուց հետո, իրականացվում է հակադարձ լիցք։
5. Սարքավորումների և խողովակների խրամուղի իջեցնելու ժամանակ մարդկանց ներկայությունը բեռի տակ չի թույլատրվում։
6. Խողովակաշարի ներքաշումը պաշտպանիչ պատյանի մեջ առաջարկվում է կատարել օրվա ցուրտ ժամանակ (առավոտ)։
7. Գծագիրը կատարված է առանց մասշտաբի։

## ԳԱԶԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱ ՊԷ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻՑ




## ՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՑԱՆԿ՝

1. Խողովակ տեղադրող մեխանիզմ - 1
2. ՊԷ խողովակների եռակցման սարք - 1
3. Էքսկավատոր - 1
4. Ռենտգենամագնիսագրաֆիկ լաբորատորիա - 1
5. Ավտոմեքենա կողային - 1

### *Գազատարի կառուցում պողպատե խողովակներից*

*Եռակցման աշխատանքներ*

Եռակցման աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

Եռակցման աշխատանքների իրականացումը իր մեջ ներառում է հետևյալ պարտադիր միջոցառումների ցուցակ՝

- եռակցման աշխատանքների նախապատրաստման և իրականացման պատասխանատու անձանց նշանակում Կապալառուի կողմից;
- կրակային (огневые) աշխատանքների անցկացման կարգագիր–ույլատրության ձևակերպում;
- եռակցման նյութերի, սարքավորումների և գործիքների նախապատրաստում;
- եռակցման աշխատանքների անցկացման վայրի օդի զննում;
- զոդման ենթակա մասերի մակերևույթի նախապատրաստում;
- անմիջականորեն եռակցման աշխատանքներ;
- եռակցման որակի հսկողություն:

Եռակցման աշխատանքները իրականացվում են ատեստավորում անցած մասնագետների ղեկավարության ներքո, համապատասխան «Էլեկտրազոդողների ատեստավորման կանոնակարգ» փաստաթղթի: Եռակցողները պետք է անցնեն ատեստավորում և ունենան վկայական:

Օգտագործվող եռակցման նյութերի տեսակները պետք է համապատասխան են հետևյալ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին՝ ԳՕՍՏ 9466-75* (էլեկտրոդ); ԳՕՍՏ 9087-81 (օքսիդալուծիչ); ԳՕՍՏ 2246-70 (մետաղալար); ԳՕՍՏ 10157-79* (A տեսակի արգոն); ԳՕՍՏ 8050-85* (եռակցման ածխածնի երկօքսիդ, ածխաթթվային գազ):

Գազային կտրումը կատարելու համար օգտագործում են՝ տեխնիկական թթվածին (ԳՕՍՏ 5583-78), ացետիլեն բալոնների մեջ (ԳՕՍՏ 5457-75), պրոպան - բութան խառնուրդ (ԳՕՍՏ 5457-75):

Ատեստավորում չանցած սարքավորումների օգտագործումը եռակցման և մոնտաժման աշխատանքների ժամանակ արգելվում է:

Խողովակների կցվանքի եռակցումը իրականացվում է էլեկտրաաղեղային (электродуговая) եռակցումով:

Անձրևի, ձյան, մառախուղի և քամու (քամու արագությունը >10մ/վրկ) ժամանակ եռակցման աշխատանքները թույլ է տրվում իրականացնել, եթե ապահովված է եռակցման տեղի պաշտպանությունը խոնավությունից և քամուց:

Առկա գազատարի կտրում և միացումը թույլատրվում է կատարել խողովակաշարը գազից ազատելուց և Պատվիրատուից թույլտվություն ստանալուց հետո: Պետք է հաշվի առնել, որ բնակավայրերի գազամատակարարման ժամանակավոր դադարեցումը թույլատրվում է 36 ժամից ոչ ավել:

*Մոնտաժման աշխատանքներ*

Խողովակաշարի մոնտաժման աշխատանքների փաթեթը իր մեջ ներառում է հետևյալ աշխատանքները`

–նախապատրաստական;

–մոնտաժման;

–հավաքակցման և եռակցման (сборочно-сварочные);

–փորձարկում;

–շահագործման հանձնում (пусковые):

Օգտագործվող խողովակները պետք է համապատասխանեն մատակարարման պահանջներին հետևյալ պարամետրերով`

–խողովակների արտադրության մեթոդ;

–պողպատի քիմիական բաղադրություն;

–պողպատի ֆիզիկական և մեխանիկական հատկություններ;

– հսկիչ երկրաչափական չափսեր:

Խողովակները, նյութերը և այլն տեղափոխվում են մոնտաժման գոտի ավտոմոբիլային տրանսպորտով:

Վերգետնյա եղանակով գազատարը տեղադրվում է հենասյուների վրա, կամրջին ամրացումով և առկա գազատարին միացման համար:

"Մուտք հող" և "Ելք հողից" հատվածներում ստորգետնյա գազատարը տեղադրվում է պողպատե խողովակից պատյանով:

Մոնտաժման աշխատանքները իրականացվում են մեխանիզմով և ձեռքով` օգտագործելով աստիճաններ, գոտիներ, ճոպաններ, սրբիչներ:

*Մեկուսիչ աշխատանքներ*

Մեկուսիչ աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի շինարարության և կապիտալ նորոգման օբյեկտների համար Պատվիրատուի կողմից մշակված տեխնոլոգիական քարտի:

Նախագծով նախատեսվում է ստորգետնյա հատվածների պողպատե խողովակների համար օգտարործել "PAM" տիպի ամրանավորված ժապավենային մեկուսիչ, իսկ պատյանի համար՝ բիտումապոլիմերային մածիկ:

Գազատարի վերգետնյա հատվածը (պողպատե խողովակ) նախատեսվում է ներկել յուղաներկով 2 անգամ, նախապես պատելով գրունտով:

***Զոդակարերի ստուգում***

Նախագծով նախատեսվում է զոդակարերի ստուգում ճառագայթագրային (ուլտրաձայնային) մեթոդով: Այդ աշխատանքները իրականացնում են անձինք, որոնց տարիքը 18 տարեկանից բարձր է: Ստուգման համար ընտրվում են այն զոդակարերը, որոնք ունեն վատագույն տեսք: Զոդակարերի ստուգումը նախատեսված է, որպեսզի հայտնաբերվեն զոդակարերի ներքին թերությունները (թերաեռք, ծակոտիներ, ներխառնուկներ, ճաքեր):

***Խողովակաշարի փչամաքրում և փորձարկում***

Շահագործման հանձնելուց առաջ գազատարը ենթարկվում է խոռոչի մաքրման, ամրության փորձարկման և հերմետիկության ստուգման: Նախագծում ընդունված է փորձարկման պնևմատիկ մեթոդը:

Փչամաքրման և փորձարկման աշխատանքները պետք է սկսել, երբ խողովակաշարի հատվածները ամբողջովին պատրաստ են և կատարված է նախագծային նիշում տեղադրված խողովակաշարի հետլիցքը:

Փչամաքրումը համարվում է ավարտված, եթե կարճախողովակից (продувочный патрубок) դուրս է գալիս չաղտոտված օդի շիթ (струя):

Գազատարը համարվում է փորձարկումը անցած և փորձարկման տվյալները համարվում են դրական, եթե փորձարկման ժամանակաշրջանում ճնշումը մնում է անփոփոխ, իսկ մեծ ճնշման ժամանակ գազի հոսակորուստ չի հայտնաբերվում:

Գազատարի փորձարկման ժամանակ հայտնաբերված թերությունները վերացվում են միայն ճնշումը նվազեցնելուց (ստանալով մթնոլորտային ճնշում) հետո:

Գազատարի խողովակի մաքրման աշխատանքները իրականացվում են յուրաքանչյուր չորացված հատվածի փչամաքրումով սեղմված օդով:

Սեղմված օդով փչամաքրման համար պետք է օգտագործվի ցածր ճնշման կոմպրեսորային կայանքներ АМС-4:

Աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովը կազմում է ակտ: Փորձարկումը համարվում է ավարտված ակտի հաստատման պահից:

**Հատում գործող ստորգետնյա կոմունիկացիաների հետ**

Գործող կոմունիկացիաների գոտում (գազատար, ջրագիծ) աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքների կատարման համար պատասխանատու անձի ղեկավարությամբ՝ գրավոր թույլտվությամբ և այդ կոմունիկացիաների շահագործող կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ:

Ստորգետնյա կոմունիկացիաների հետ հատումների հատվածում հողի մշակումը պետք է իրականացվի մեխանիզացված մեթոդով՝ հաշվի առնելով ՄՆիՊ 3.02.01-87-ի պահանջները՝ կողային պատից ոչ ավելի, քան 2.0 մ հեռավորության վրա և առնվազն 1.0 մ բարձրության վրա: Մնացած հողը պետք է մշակվի ձեռքով, բացառելով այդ կոմունիկացիաների վնասման հնարավորությունը:

Աշխատանքը սկսելուց առաջ անհրաժեշտ է ճշտել ստորգետնյա կոմունիկացիաների գտնվելու վայրը և իրական խորությունը: Աշխատանքը կատարել շահագործող կազմակերպության ներկայացուցիչների ներկայությամբ: Բացված կոմունիկացիաների անվտանգության համար պատասխանատվությունը կրում է Կապալառուն:

Պահպանվող գոտիներում աշխատանքներ իրականացնելիս արգելվում է գրունտի ժամանակավոր կույտը ստեղծել գոյություն ունեցող կոմունիկացիաների վրա:

Եթե շինմոնտաժային աշխատանքների ընթացքում հայտնաբերվում են կոմունիկացիաներ, որոնք նշված չեն նախագծային փաստաթղթերում, ապա անհրաժեշտ է տեղեկացնել շահագրգիռ կազմակերպություններին և սպասել նրանց ներկայացուցիչներին: Միևնույն ժամանակ պետք է միջոցներ ձեռնարկել հայտնաբերված կոմունիկացիաները վնասվելուց պաշտպանելու համար:

Գործող կոմունիկացիաների գծերը հատելիս գազատարը տեղադրվում է պաշտպանիչ պատյանի մեջ՝ պահպանելով դրանց միջև սահմանված ուղղահայաց

հեռավորությունները, որոնք կախված են գազի ճնշումից և կոմունիկացիաների գծերի տեսակից:

**Հատում գործող վերգետնյա կոմունիկացիաների հետ**

Շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացնել համաձայն 21. 04. 2023 թ. N 583-Ն «Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» և 13. 04. 2023 թ. N 523-Ն «Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին» որոշումների, հաստատված ՀՀ կառավարության կողմից:

Գոյություն ունեցող հաղորդակցությունների անվտանգության գոտում աշխատանքներ կատարելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել դրանց անվտանգ շահագործման ապահովմանը, հատկապես շինհրապարակում հողային աշխատանքներ կատարելիս և երթևեկության ընթացքում:

Բոլոր աշխատակիցները պետք է ծանոթանան անվտանգության կանոններին և ունենան քննություններ հանձնելու վկայականներ: Բացի այդ, նրանք պետք է անցնեն անվտանգության դասընթացներ աշխատավայրում՝ հաշվի առնելով այս օբյեկտի առանձնահատկությունները:

Գործող կոմունիկացիաների գոտում աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքների կատարման համար պատասխանատու անձի ղեկավարությամբ՝ գրավոր թույլտվությամբ և այդ կոմունիկացիաների շահագործող կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ:

Օդային բարձրավոլտ գծերի (ԲԳ) տակով վարելիս ամբարձիչ մեքենաների և մեխանիզմների բարձրացնող և քաշվող մասերը պետք է լինեն աշխատանքային դիրքում:

Շարժման արագությունը որոշվում է տեղական պայմաններով, սակայն չպետք է գերազանցի 10 կմ/ժ-ը: ԲԳ-ի տակով մեքենաները, ամբարձիչ մեքենաները և մեխանիզմները պետք է անցնեն լարերի նվազագույն անկման վայրերում (հենակետերի մոտ):

Արգելվում է կռունկի տեղակայումը այն հարթակի վրա, որի թեքությունը գերազանցում է կռունկի անձնագրով նշված թեքության չափից: Արգելվում է նաև կռունկի տեղակայումը լարման տակ գտնվող էլեկտրահաղորդման գծերի տակ:

ԲԳ-ի անվտանգության գոտում շինարարական մեքենաներ տեղադրելիս և բարձրացնող թափք ունեցող տրանսպորտային միջոցներ օգտագործելիս անհրաժեշտ է հանել լարումը օդային էլեկտրահաղորդման գծից:

Եթե հիմնավորված է, որ օդային էլեկտրահաղորդման գծից լարման հանումը անհնար է, թույլատրվում է էլեկտրահաղորդման գծի անվտանգության գոտում շինարարական մեքենաների շահագործումը հետևյալ պահանջների պահպանման պայմանով.

ա) Ավտոմեքենաների, բեռնամբարձ մեքենաների և մեխանիզմների շարժման, տեղակայման և աշխատանքի ժամանակ դրանց ամբարձիչ և դուրս եկող մասերից, առասաններից, բեռնաբռնիչ հարմարանքներից, բեռներից մինչև լարման տակ գտնվող հոսանատար մասերը եղած հեռավորությունը պետք է լինի աղյուսակում նշվածից ոչ պակաս (N 583-Ն որոշում, 22-րդ գլխի 551-րդ կետի պահանջ):

Լարման տակ գտնվող հոսանքատար մասերից թույլատրվող հեռավորություններ

Աղյուսակ

| Լարումը, կՎ | Հեռավորությունը մարդկանցից և նրանց կողմից օգտագործվող գործիքներից ու հարմարանքներից, ժամանակավոր ցանկապատերից (մ) | Հեռավորությունն աշխատանքային կամ տեղափոխման վիճակում գտնվող մեխանիզմներից, բեռնամբարձ մեքենաներից, առասաններից, բեռնակալիչ հարմարանքներից և բեռներից (մ) |
|---|---|---|
| **1** | **2** | **3** |
| ՕԳ մինչև 1 կՎ | 0,6 | 1,0 |
| Մնացած էլեկտրատեղակայանքները | չի նորմավորվում (առանց հպման) | 1,0 |
| 1-35 | 0,6 | 1,0 |
| 110 | 1,0 | 1.5 |
| 220 | 2.0 | 2.5 |
| 330 | 2.5 | 3.5 |
| 400 | 3.5 | 4.5 |
| 500 | 4.0 | 5,0 |

բ) Առանց լարումը հանելու՝ ԲԲՍ-ում և ՕԳ-ի անվտանգության գոտում բոլոր աշխատանքների կատարման դեպքում բեռնամբարձ մեքենաներն ու մեխանիզմները պետք է հողակցվեն (N 583-Ն որոշում, 22-րդ գլխի 554-րդ կետի պահանջ):

## Աշխատանքի անվտանգություն

Աշխատանքները իրականացնելու ժամանակ անհրաժեշտ է կատարել համաձայն ՀՀՇՆ 13-02-2022-ի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2025 թվականի մարտի 5-ի N 07-Ն հրամանով հաստատված «Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման ուղեցույց»-ի:

Քանդված խրամուղու ողջ տարածքով կահավորումն (արգելափակող գոտի) անհրաժեշտ է կատարել պոլիէթիլենային ժապավենով (դաշտային պայմաններում):

Անվտանգության պայմանական նշանները պետք է ընտրվեն համապատասխան ՀՀ քաղաքաշինության նախարարի 2025 թվականի մարտի 5-ի N 07-Ն հրամանով հաստատված «Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման ուղեցույց»-ի, կետ 4-ի (կապալառուի և տեխնիկական հսկողություն իրականացնողի նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը), ենթակետեր 6-ի ÷ 14-ի ցանկին:

Աշխատողները պետք է ապահովվեն հատուկ հագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով: Արգելվում է օտար անձանց մուտքը շինարարության տարածք: Դրա համար այդ տարածքը ցանկապատվում է: Աշխատողները պետք է անցնեն ուսուցում աշխատանքի անվտանգության վերաբերյալ: Մոնտաժման, եռակցման, բեռնման և բեռնաթափման աշխատանքներին թույլատրվում են անձինք, որոնց տարիքը 18 տարեկանից բարձր է և որոնք ունեն համապանասխան վկայական:

Շինարարական մեքենաները պետք է ունենան կայծմարիչներ: Հրավտանգ աշխատանքների իրականացման տարածքում պետք է նախատեսվեն հրդեհի մարման համար առաջին անհրաժեշտության միջոցներ:

Շինարարական մեքենաները, մեխանիզմները, սարքավորումները և գործիքները պետք է համապատասխան են աշխատանքի անվտանգության պետական ստանդարտներին և ունենան սերտիֆիկատներ, անձնագրեր:

Տեղափոխման աշխատանքները սկսելուց առաջ կռունկավարը պետք է՝ համոզվի, որ տեղափոխման գոտու տարածքում բացակայում են կողմնակի անձինք; տա նախազգուշացնող ազդանշան:

Կռունկի շարժը էլեկտրահաղորդման գծերի տակ պետք է իրականացվի այն ժամանակ, երբ կռունկի սլաքը գտնվում է աշխատանքային դիրքում: Սլաքի վերևի

կետից մինչև մոտակա էլեկտրահաղորդման լարը ընկած հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 2մ-ից:

Արգելվում է կռունկի տեղակայումը այն հարթակի վրա, որի թեքությունը գերազանցում է կռունկի անձնագրով նշված թեքության չափից:

Արգելվում է նաև կռունկի տեղակայումը լարման տակ գտնվող էլեկտրահաղորդման գծերի տակ: Անձրևի և մառախուղի ժամանակ պետք է դադարեցնել կռունկի աշխատանքը:

Մոնտաժման աշխատանքները կատարելու համար կռունկավարը և մոնտաժողը պետք է համոզված լինեն, որ՝

- մոնտաժող էլեմենտի (խողովակի) քաշը չի գերազանցում ավտոամբարձիչի բեռնունակությունը (грузоподъемность);
- խողովակը ամրացվում է (строповка) բոլոր տեղերում, որոնք նախատեսված են այդ գործողության համար և բարձրացվում են այնպես, որ բացառվի ամրացվող ճյուղերի (ветви строп) շեղ ձգումը;
- խողովակի բարձրացումը պետք է սկսել ղեկավարի հրամանը ստանալուց հետո;
- խողովակը նախապես պետք է բարձրացնել 100-200մմ բարձրության վրա, ընթատել բարձրացումը, համոզվել ճիշտ ամրացման (строповка) մեջ, ապա շարունակել բարձրացումը:

Աշխատանքները անհրաժեշտ է կատարել ցերեկային ժամերին: Երեկոյան ժամերին աշխատանքները շարունակելու ժամանակ պետք է ապահովվի բանվորների աշխատատեղերի պահանջվող լուսավորությունը համաձայն ԳՕՍS 12.0.046-2014:

Նախագծում մշակված է շինարարության կազմակերպման գլխավոր հատակագիծ:

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ




## Դաշտարին պայմաններում ցանկապատում պոլիէթիլենային ժապավենով



## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՍՏԱՌԻ (ցուցատախտակ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ




## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Կադաստրային հատագծում կետագծով նշված հատվածը չի համապատասխանում կադաստրային քարտեզին, այն գծվել է տեղանքի ուսումնասիրման արդյունքում:

Խնդրում ենք համաձայնեցման ընթացքում հաշվի առնել վերը նշվածը, ուղեգծի անցկացման ժամանակ խուսափելու համար հետագա անհամապատասխանություններից:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Նախագծով նախատեսվում է տեղադրել ճանապարհային երթևեկության համապատասխան պայմանական նշաններ:

2. Քանդված խրամուղու ողջ տարածքով կահավորումն (արգելափակող գոտի) անհրաժեշտ է կատարել պոլիէթիլենային ժապավենով (դաշտային պայմաններում):

3. Շինմոնտաժային աշխատանքների իրականացման ողջ տարածքում՝ հանդիպակաց դասավորությամբ տեղադրված տակդիրով և կանգնակով ցուցատախտակի միջոցով՝ տեսանելի վայրերում ապահովել կատարվող աշխատանքների իրազեկումը (մատակարար և կապալառու կազմակերպությունների տվյալների նշումով, այդ թվում՝ տարբերանշան, հասցե, հեռախոսահամար, աշխատանքների անվանումը և նպատակը, կատարման ժամկետի սկիզբը և ավարտը):

4. Ստեղծված ժամանակավոր պատնեշների վրա տեղադրել համապատասխան լուսատու սարքեր՝ գիշերային և մութ ժամերին երթևեկության ու հետիոտնի տեղաշարժի անհրաժեշտ անվտանգությունն ապահովելու համար:

5. Արգելափակող գոտու, լուսատու սարքերի, ցուցատախտակի տեղադրումը գլխավոր հատակագծի վրա կատարված է առանց մասշտաբի:

6. Չափերը ներկայացված են միլիմետրերով:

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



— Գոյություն ունեցող միջին ճնշման ստորգետնյա գազատար

— Նախագծվող միջին ճնշման ստորգետնյա ՊԷ գազատար

— Չկազմատվող միացություն «ՊԷ-Պող»

— Ցուցատախտակ՝ պատվիրատու և կապալառու կազմակերպությունների և շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի տվյալներով

— Սահմանազատող պոլիէթիլենային ժապավեն

— Պոլիէթիլենային ժապավենով ճաղավանդակի կանգնակներ

— Լուսատու սարքեր՝ գիշերային և մութ ժամերին անվտանգ երթևեկության և հետիոտնի տեղաշարժի համար

## Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ

Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները իրականացվում են համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008-ի և ՀՀՇՆ 13-05-2026-ի պահանջներին:

Նախագծային լուծումների համապատասխանության համար պատասխանատվությունը կրում է այն շինարարական կազմակերպությունը, որը իրականացնում է այդ աշխատանքները: Աշխատանքների համար տրամադրված (ժամանակավոր օգտագործման համար) հողատարածքները շինարարության ավարտից հետո պետք է պարտադիր վերականգնվեն: Բոլոր անհրաժեշտ միջոցառումները կապված արտաքին միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համապատասխան կոմպետենտ մարմինների կողմից:

Այդ միջոցառումները հետևյալն են՝ ժամանակավոր օգտագործվող հանրային եւ մասնավոր հողատարածքների վերականգնում; նախազգուշացնող միջոցները, որոնք կապված են աղտոտման կանխարգելումը; ծառերի և բույսերի պաշտպանություն; չօգտագործվող և օգտագործվող նյութերի ճիշտ բաշխում; շինհրապարակների անհրաժեշտ մաքրում և սարքավորում; սանիտարական միջոցառումներ; վնասակար ազդեցությունների նվազեցում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է իրականացնել տարածքի վերականգնման եւ բարեկարգման աշխատանքներ: Կապալառուն պետք է կազմակերպի աշխատանքները այնպես, որ կանխվի ախտոտումը շինարարական աղբից, նավթամթերքից, քիմիական նյութերից:

Կապալառուն պարտավոր է ապահովել թափոնների և շինարարական աղբի հեռացում: Կապալառուն պարտավոր է նախատեսել շինարարական փոշուց օդի աղտոտման նվազեցման միջոցառումներ:

Կազմեց՝ Կ. Սաֆարյան




| | | | |
|---|---|---|---|
| Նախագծեց | Ս. Մարտոյան | | |
| Կազմեց | Շ.Գասպարյան | | |
| Կազմեց | Կ.Գաբրիելյան | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| Պաշտոն | ԱԱՀ | Ստորագ. | |
| | | | |
| | | | |
| | | | 2026թ. |

| | | | |
|---|---|---|---|
| ՕՖՅԵԿՏ № 14-005-26 | | | |
| Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ գազատարի վերանորոգում | | | |
| Միջին ճնշման գազատար | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | ԱՆ | 1 | 5 |
| Իրավիճակային գծապատկեր | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ | | |







## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Գազատարի մոնտաժումն և փորձարկումն իրականացնել համաձայն ՀՀՇՆ 42-01-2023 պահանջների:
2. Մոնտաժային աշխատանքների ժամանակ այլ կոմունիկացիաների ի հայտ գալու դեպքում, որոնք նախագծում նշված չեն, հարկավոր է անհապաղ կանգնեցնել աշխատանքները և տեղյակ պահել շահագործող կազմակերպության աշխատակիցներին:
3. Նախագծվող ստորգետնյա մ/ճ գազատարը նախատեսված է ՊԷ100 SDR17.6 Ø315x17.9 ԳՕՍՏ Р50838-2009 խողովակներից, որը նախատեսվում է տեղադրել 1.0մ խորությամբ, հաշված խողովակի վերին եզրից:
4. Ստորգետնյա ՊԷ գազատարը ի հայտ բերելու նպատակով, խողովակի երկայնքով անցկացվում է պղնձյա հաղորդալար և բացահայտիչ ժապավեն: Պղնձյա հաղորդալարը տեղադրվում է գազի շարժման ուղղությամբ խողովակի աջ մասում, իրարից 0.2մ հեռավորությամբ:
5. Հաշվի առնելով համայնքի հետագա զարգացումը նախագծվող գազատարի տարամագիծը ընտրվել է Ø315x17.9, որը համաձայնեցվել է շահագործող և պատվիրատու կազմակերպությունների հետ:
6. Նվազագույն հորիզոնական հեռավորությունը ստորգետնյա ինժեներական ցանցերի միջև պետք է լինի՝ ջրագծից 1.0մ, կոյուղագծից 1.5մ: Ուղղահայաց հեռավորությունը՝ ջրագծից, կոյուղագծից 0.15մ, իսկ էլեկտրամալուխի վրա անցկացնելով ՊԷ պատյան նվազագույնը՝ 0.25մ:
7. Ուղեգծի երկայնքով նախատեսվում է տեղադրել տարբերիչ ցուցանակներ: Ցուցանակը տեղադրվում է գազատարի աջ կողմում:
8. Հողային աշխատանքներ իրականացնելիս տեղադրել անվտանգ երթևեկության համար նախատեսված ազդանշանային նշաններ:
9. Շինարարական աշխատանքների ժամանակ համատեղ նայել "Գազատարի կոռոզիոն վիճակի հետազոտում"-ի նախագիծը:

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| ПЭ | Նախագծվող մ/ճ ստորգետնյա ՊԷ գազատար |
| ПЭ | Չկազմատվող միացություն «ՊԷ-Պող» |
| | Առկա մ/ճ ստորգետնյա գազատար |
| Ꝁ | Տարբերիչ ցուցանակ |

### ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ԳԲՑ և ՆԳՀՇ ու Ս բաժին — Ա. Սարգսյան

### ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

Գավառի ԳԳՄ տնօրենի տեղակալ՝
գլխավոր ճարտարագետ — Ս. Գարեյան

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Նախագծեց | Ս. Մարտոյան | | | ՕՖՅԵԿՏ № 14-005-26 | | | |
| Կազմեց | Շ.Գասպարյան | | | Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ գազատարի վերանորոգում | | | |
| Կազմեց | Կ.Գաբրիելյան | | | | | | |
| | | | | Միջին ճնշման գազատար | Փուլ | Թերթ | Թերթեր |
| Պաշտոն | ԱԱՀ | Ստորագ. | | | ԱՆ | 2 | 5 |
| | | | 2026թ. | Գազատարի հատակագիծ Մ1:1000 | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ | | |






| Նախագծեց | Ս. Սարտոյան | | | ՕՐՅԸԿՏ № 14-005-26 |
|---|---|---|---|---|
| Կազմեց | Հ.Գասպարյան | | | Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գավառ և Սարուխան գյուղերի սահմանակից տարածք |
| Կազմեց | Կ.Գարիբելյան | | | |
| Ղաշտոն | ԱԱՀ | Ստորագ. | 2026թ. | Միջին ճնշման գազատար |

| Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|
| ԱՆ | 3 | 5 |

Երկայնական կտրվածք

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ







Ամրանի երկարությունը - 3x300մմ
Ամրանի քաշը 3x 0.267 - 0.8կգ

| H | d | 219 | 125 | 100 | 80 | 70 | 50 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5.0 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 4.5 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 4.0 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 3.5 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 3.2 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 3.0 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 2.5 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 2.2 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 2.0 | a | 500 | | | | | |
| | b | 600 | | | | | |
| 1.5 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 1.0 | a | | | | | | |
| | b | | | | | | |
| 0.5 | a | | | | | | |
| | b | | | | | | |

| Շարժական հենասյան բետոնի հիմքի չափսերը և ծավալները | | |
|---|---|---|
| հենասյան բարձրությունը (վերգետնյա մաս) H | հենասյան բետոնե հիմքի չափսերը մ | բետոնի ծավալը մ$^3$ |
| 5.0 | 0.6x0.6x1.1(b) | 0.4 |
| 4.5 | 0.6x0.6x1.0(b) | 0.30 |
| 4.0 | 0.5x0.5x0.9(b) | 0.23 |
| 3.5 | 0.5x0.5x0.8(b) | 0.20 |
| 3.0 | 0.5x0.5x0.7(b) | 0.18 |
| 2.5 | 0.5x0.5x0.6(b) | 0.15 |
| 2.2 | 0.5x0.5x0.6(b) | 0.15 |
| 2.0 | 0.5x0.5x0.6(b) | 0.15 |
| 1.5 | 0.5x0.5x0.6(b) | 0.15 |
| 1.2 | 0.5x0.5x0.6(b) | 0.15 |
| 1.0 | 0.5x0.5x0.6(b) | 0.15 |
| 0.5 | 0.5x0.5x0.6(b) | 0.15 |

| | | |
|---|---|---|
| Նախագծեց | Ս. Մարտոյան | |
| Կազմեց | Շ.Գասպարյան | |
| Կազմեց | Կ.Գաբրիելյան | |
| Պաշտոն | ԱԱՀ | Ստորագ. |

# ՕԲՅԵԿՏ № 14-005-26

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ գազատարի վերանորոգում

Միջին ճնշման գազատար

| Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|
| ԱՆ | 4 | 5 |

Շարժական հենասյուն

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ

2026թ.

## Հենարան
Մ1:25




| Դիրք | Անվանում | Նշանակում | Քանակ հտ | 1 տարրի զանգված կգ | Ամբողջ զանգված կգ |
|---|---|---|---|---|---|
| | 1 հատի համար | Հենարան | | | |
| 1 | ГОСТ 8509-86 | L40x40x4 ΣL= 0.7 | - | 2.42 | 1.69 |
| 2 | ГОСТ 19903-2015 | -δ= 4 300 x 200 | 1 | 1.884 | 1.88 |
| 3 | -//- | -δ= 4 60 x 150 | 1 | 0.283 | 0.28 |
| | | ընդամենը | | | 3.86 |

### Ծանոթություն

1. Եռակցման համար կիրառել Э42 տիպի էլեկտրոդներ համաձայն ГОСТ 9467-75
2. Եռքակարի բարձրությունը ընդունել եռակցվող տարրերի փոքրագույնի չափով, բայց ոչ պակաս 4մմ

| | | | |
|---|---|---|---|
| Նախագծեց | Ս. Մարտոյան | | |
| Կազմեց | Շ.Գասպարյան | | |
| Կազմեց | Կ.Գաբրիելյան | | |
| Պաշտոն | ԱԱՀ | Ստորագ. | |
| | | | 2026թ. |

ՕԲՅԵԿՏ № 14-005-26

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ գազատարի վերանորոգում

| Միջին ճնշման գազատար | Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|---|
| | ԱՆ | 5 | 5 |

Ներդիր տարրի և հենարանի տեղադրում հենապատին

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասից
Գանձակ ու Սարուխան գյուղերը սնող մ/ճ գազատարի վերանորոգում
Капитальный ремонт подводящего газопровода среднего давления от участка Хацарат до сел Гандзак и Сарухан
г.Гавар Гегаркуникского марза
14-005-26
Объем работ

| | Աշխատանքի անվանումը<br>Название работы | Չափ. Միավ<br>Ед.изм | ընդամենը<br>Итого | Ծանոթ.<br>Примеч. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Խրամուղու քանդում էքսկավատորով<br>Разработка траншеи экскаватором в грунтах | $մ^3/м^3$ | | |
| | III կարգի գրունտում | | 1133.0 | |
| 2 | Խրամուղու քանդում ձեռքով<br>Разработка траншеи вручную | $մ^3/м^3$ | | |
| | III կարգի գրունտում | | 23.1 | |
| 3 | Խրամուղու ետլիցք ձեռքով<br>Обратная засыпка вручную | $մ^3/м^3$ | 13.0 | |
| 4 | Խրամուղու ետլիցք էքսկավատորով<br>Обратная засыпка экскаватором | $մ^3/м^3$ | 638.8 | |
| 5 | 0.1մ ավազի նստաշերտի ստեղծում խողովակի տակ և ծածկում 0.2 մ ավազի շերտով էքսկավատորով<br>Устройство подушки под трубу из мягкого грунта толщ. 10см и обсыпка сверху экскаватором толщ. 20 см | $մ^3/м^3$ | 433.3 | |
| 6 | Ավելացած գրունտի բարձում և տեղափոխում բեռնատար ավտոմեքենայով 7 կմ<br>Погрузка лишнего грунта в автосамосвалы и вывоз на расстояние 7 км | $մ^3$ | 504.3 | |
| | | տ/т | 882.5 | |
| 7 | Տարածքի տոփանում մեխանիզմով<br>Трамбовка грунта механизмом | $մ^2/м^2$ | 820.0 | |
| | | $մ^3/м^3$ | 246.0 | |
| 8 | Չկազմատվող միացություն «ՊԷ-Պողպատ»<br>Неразъемное соединение «Полиэтилен-Сталь» | հատ/шт | | |
| | Ø 315/273 | | 6 | |
| | Ø 90/89 | | 1 | |
| 9 | Պոլիէթիլենային խողովակի տեղադրում խրամուղում<br>Укладка трубы из полиэтилена в траншею | մ/м | | |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 315 x 17.9 | | 911.0 | ԳՕՍՏ ГОСТ Р50838-2009 |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 90 x 5.2 | | 3.0 | |
| 10 | Խողովակի ծայրերի ուղղում<br>Механическая торцовка концов трубы | | | |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 315 x 17.9 | հատ/шт | 66 | |
| 11 | Խողովակի մեխանիկական կտրում<br>Механическая резка концов трубы | | | |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 315 x 17.9 | հատ/шт | 9 | |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 90 x 5.2 | հատ/шт | 1 | |
| 12 | Խողովակի կցվանքային եռակցում<br>Сварка труб встык | | | |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 315 x 17.9 | հատ/шт | 66 | |
| 13 | Խողովակի կցորդչային եռակցում<br>Муфтовое соединение | | | |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 315 x 17.9 | հատ/шт | 9 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 14 | Կցորդչային եռակցում ձևավոր մասերի համար<br>(վերադիր արուղղում, եռաբաշխիկ, չկազմ. միացություն)<br>Муфтовое соединение фасонных частей седловой отвод<br>(тройник, нераз. соединение) | | | |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 315 x 17.9 | հատ/шт | 8 | |
| 15 | Գազատար խողովակի տեղադրում խրամուղում և հակակոռոզիոն մեկուսացում "PAM"տիպի մեկուսիչ նյութերով փորձարկումով<br>Укладка трубопровода в траншею с противокоррозионным покрытием комплектом изоляционных материалов «PAM» с испытанием | | | |
| | Ø273x6.0մմ | մ/м | 10.0 | ԳՕՍՏ 10704-91 |
| | Ø89x4.0մմ | | 2.0 | |
| 16 | Պողպատե պատյանի տեղադրում հորզոնական հորատման եղանակով և մեկուսացում բիտումապոլիմերային մածիկով | | | |
| | Ø426x6.0 | հատ/шт | 1 | |
| | | մ/м | 13 | |
| 17 | Մետաղական տարրեր գազատարը կամրջի հենապատին ամրացնելու համար<br>Установка металлических элементов для опор газопровода к стене моста | հատ/шт | 4 | ծավալ<br>տես թերթ 5 |
| 18 | Պողպատե պատյանի տեղադրում խրամուղում և մեկուսացում երկշերտ բիտումապոլիմերային մածիկով<br>Укладка стального футляра в траншею с противокоррозионным покрытием на основе двухслойной битумно-полимерной мастики | | | |
| | Ø426x6.0մմ | հատ/шт | 6 | |
| | | մ/м | 9.0 | |
| | Ø133x4.0մմ | հատ/шт | 1 | |
| | | մ/м | 1.5 | |
| 19 | ՊԷ գազատարի անցկացում պողպատյա պատյանով<br>Протаскивание ПЭ труб в стальной футляр | | | |
| | Ø315x17.9/Ø426x6.0մմ | հատ/шт | 1 | |
| | | մ/м | 13 | |
| 20 | ՊԷ օղակների տեղադրում գազատարի վրա<br>Расход ПЭ-труб для опорных колец | | | |
| | ՊԷ 100 SDR 17.6 Ø 315 x 17.9 | հատ/шт | 5 | |
| | | մ/м | 0.5 | |
| 21 | Ստուգիչ խողովակ Ø 33.5x 3.2<br>Контрольная трубка | հատ/шт | 1 | |
| | | մ/м | 10 | |
| 22 | Պատյանի ծայրերի հերմետիկացում բիտումով<br>Заделка концов футляра газопровода битумом | | | |
| | Ø426x6.0մմ | հատ/шт | 6 | |
| | Ø133x4.0մմ | | 1 | |
| 23 | ՊԷ խողովակների զոդակարերի ստուգում ուլտրաձայնային եղանակով<br>Проверка сварных стыков ультразвуковым методом | հատ/шт | 17 | |
| 24 | Պողպատյա խողովակի զոդակարերի ստուգում ֆիզիկական եղանակով dպ<300մմ<br>Проверка сварных стыков физическим методом | հատ/шт | 14 | |
| 25 | Արմունկ 45° ՊԷ<br>Отвод ПЭ с ЗН | | | |
| | Ø 315 | հատ/шт | 2 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 26 | Արմունկ 90° ՊԷ<br>Отвод ПЭ с ЗН | | | |
| | Ø 315 | հատ/шт | 6 | |
| 27 | Եռաբաշխիկ ՊԷ<br>Тройник ПЭ с ЗН | | | |
| | Ø 315 | հատ/шт | 1 | |
| 28 | Անցում ՊԷ<br>Переход ПЭ с ЗН | | | |
| | Ø 315/Ø 90 | հատ/шт | 1 | |
| 29 | Տարբերիչ նշան<br>Опознавательный знак | հատ/шт | 6 | |
| 30 | Պղնձե լարի տեղադրում խրամուղում Ф-2.5մմ2<br>Монтаж медного провода Ф -2,5 мм² | մ/м | 920.0 | |
| 31 | Բացահայտիչ ժապավեն<br>Сигнальная лента | մ/м | 914.0 | |
| 32 | ՊԷ գազատարի փչամաքրում<br>Продувка ПЭ газопровода | մ/м | 914.0 | |
| 33 | ՊԷ գազատարի փորձարկում<br>Испытание ПЭ газопровода | մ/м | 914.0 | |
| 34 | Գազատարի ներկում 2 անգամ<br>Окраска газопровода за 2 раза<br>а) грунтовка ХС-010 гф-021 գրունտ ГФ-021 | $մ^2/м^3$ | 40.0 | |
| | б) масляная краска յուղաներկ | | 40.0 | |
| 35 | Փոսերի քանդում մետաղական հենասյուների համար<br>Разработка ям вручную под металлические опоры | $մ^2/м^3$ | | |
| | III կարգի գրունտում | | 0.75 | |
| 36 | Ավելացած գրունտի բարձում և տեղափոխում բեռնատար ավտոմեքենայով 7 կմ | $մ^3/м^3$ | 0.75 | |
| | | տ/т | 1.31 | |
| 37 | Բետոնից հիմքեր M 150 (B 12.5)<br>Бетонное основание | $մ^3/м^3$ | 0.75 | |
| 38 | Մետաղական հենասյուներ գազատարի տակ<br>Металлические опоры под газопровод | | | |
| | Ø 219x4.0 H= 2.0 (2.5) | հատ/шт | 4 | |
| | | կգ/кг | 212.1 | |
| | Ø 76x3.0 H= 0.5 (1.0) | հատ/шт | 1 | |
| | | կգ/кг | 5.4 | |
| 39 | Կիսախողովակների տեղադրում գազատարի տակ<br>Установка металлических чаш | հատ/шт | 9 | |
| | | կգ/кг | 40.6 | |
| 40 | Պարոնիտ<br>Паронит | հատ/шт | 9 | |
| | | կգ/кг | 3.3 | |
| 41 | Մետաղական ամրան Ø 12 AIII (հենասյան համար)<br>Металлическая арматура (для опоры) | հատ/шт | 9 | |
| | | կգ/кг | 7.2 | |
| 42 | Պողպատյա գազախողովակի վերգետնյա տեղադրում հենասյուների վրա փորձարկումով<br>Прокладка газопровода на металлических опорах с испытанием | | | |
| | Ø 273x6.0մմ | մ/м | 30.0 | ԳՕՍՏ 10704-91 |
| | Ø 89x4.0մմ | | 28.0 | |
| 43 | Արմունկ 90°<br>Отвод | | | |
| | Ø 273x6.0մմ | հատ | 10 | ԳՕՍՏ<br>ГОСТ<br>17375-2001 |
| | | կգ | 230.0 | |
| | Ø 108x4.0մմ | հատ/шт | 1 | |
| | | կգ/кг | 2.5 | |
| | Ø 89x4.0մմ | հատ/шт | 5 | |
| | | կգ/кг | 7.5 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| --- | --- | --- | --- | --- |
| 44 | Խցափակիչ<br>Заглушка | | | |
| | Ø 273x6.0մմ | հատ | 3 | ԳՕՍՏ ГОСТ 17379-2001 |
| | | կգ | 14.7 | |
| | Ø 108x4.0մմ | հատ/шт | 1 | |
| | | կգ/кг | 0.7 | |
| 45 | Եռաբաշխիկ<br>Тройник | | | |
| | Ø 273x6.0մմ | հատ | 1 | ԳՕՍՏ ГОСТ 17376-2001 |
| | | կգ | 18.4 | |
| 46 | Տրամագծի անցում<br>Переход | | | |
| | Ø 273x6.0/108x4.0մմ | հատ/шт | 1 | ԳՕՍՏ ГОСТ 17378-2001 |
| | | կգ/кг | 6.0 | |
| 47 | Առկա գազատարի կտրում<br>Резка существующего газопровода | | | |
| | dպ250 | հատ/шт | 3 | |
| | dպ100 | | 1 | |
| 48 | Գազատարի փչամաքրում<br>Продувка газопровода | մ/м | 70.0 | |

Նախագծեց Ս. Մարտոյան

կազմեց Շ Գասպարյան

# ՏԱՐԲԵՐԻՉ ՆՇԱՆ

